Այն դեպքերում, երբ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի՝

- դրույթները հստակ չեն կամ ունեն տարաբնույթ ընկալում,
- դրույթներն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող նույն իրավական ակտի տարբեր դրույթների հակասության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում,
- ուժի մեջ մտնելու ժամկետի որոշման նպատակով,
- իրավաբանական ուժ ունենալու հարցերի պարզաբանման նպատակով,
- կիրառման բնագավառում ծագած այլ հարցերի ճշտման նպատակով:

Ո՞վ է տալիս պաշտոնական պարզաբանում

Հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պաշտոնական պարզաբանումներ կարող է տալ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը, ծառայության պետի ստորագրությամբ:

Իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը տրվում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավական ակտի պաշտոնական մեկնաբանման համար նախատեսված կանոններով:

Ի՞նչ է անհրաժեշտ պաշտոնական պարզաբանում ստանալու համար

Հարկ վճարողը հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում ստանալու համար պետք է ներկայացնի դիմում վերադաս հարկային մարմին: Դիմումում հարկ վճարողը պետք է հիմնավորի հակասությունների, տարաբնույթ ընկալումների կամ այլ հարցերով պարզաբանում ստանալու անհրաժեշտությունը և նշի առաջադրված հարցերի իրավական հիմքերը: Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հարկ վճարողը կարող է ներկայացնել հարցերի պարզաբանման իր սեփական միայն մեկ տարբերակը: Իսկ նշված պահանջներից չբխող դիմումները վերադաս հարկային մարմնի կողմից կհամարվեն խորհրդատվություն ստանալու նպատակ հետապնդող դիմումներ, որոնց վերաբերյալ տրվում են միայն օրենքով նախատեսված պատասխաններ:

Պաշտոնական պարզաբանում ստանալու ժամկետները

Վերադաս հարկային մարմինը պաշտոնական պարզաբանումները տալիս է հարկ վճարողի համապատասխան դիմումն ստանալուց հետո հաջորդող տասնհինգ օրվա ընթացքում: Նշված ժամկետում վերադաս հարկային մարմնից պաշտոնական պարզաբանում չստանալու դեպքում վճարողը իրավասու է հարկային օրենսդրության պահանջներն իրականացնելիս առաջնորդվել իր ներկայացրած պարզաբանման տարբերակով, եթե այդ պարզաբանումն ուղղակիորեն բխում է իրավական ակտի պահանջներից, չի փոփոխում դրա իմաստը, պարզաբանվում է օրենքի պահանջների պահպանմամբ և դրանում պարունակվող բառերի ու արտահայտությունների տառացի նշանակությամբ:

Ուշադրություն

Եթե հարկ վճարողն առաջնորդվել է օրենքի պահանջների պահպանմամբ տրված պարզաբանումով, ապա այդ պարզաբանման և վերադաս հարկային մարմնի հետազայում տրված պարզաբանման կամ եզրակացության միջև հակասություն առաջանալու դեպքում դիմող հարկ վճարողն ազատվում է ոչ ճիշտ պարզաբանման հետևանքով թույլ տրված սխալների համար նախատեսված պատասխանատվությունից:

Պաշտոնական պարզաբանման հրապարակումը

Պաշտոնական պարզաբանումների մեկ օրինակը, դրանց ստորագրման օրվան հաջորդող երրորդ օրը, ուղարկվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, որը "Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի" առաջիկա համարում հրապարակում է այն:

Հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի վերաբերյալ ոչ պաշտոնական պարզաբանումներ կարող են տալ պարզաբանման ենթակա հարկային հարաբերությունների կարգավորման բնագավառում աշխատող պաշտոնատար անձինք, փաստաբանները, իրավաբանական ծառայություններ իրականացնող անձինք, համապատասխան բնագավառի այլ մասնագետներ: Նմանատիպ պարզաբանումները համարվում են խորհրդատվական բնույթի պարզաբանումներ:

4

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԸԱՐԿ ԿՃԱՐՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՈՒՏԱԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՆԵՐԱՌՅԱԼ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑԻՑ

Հարկ վճարողների վերաբերյալ հարկային մարմնում առկա տեղեկությունները կարող են լինել տարբեր, ինչպես դրանց ստացման աղբյուրների, այնպես էլ կուտակման կամ բովանդակային առումների: Ընդհանուր առմամբ, հարկ վճարողի վերաբերյալ հարկային մարմնում առկա տեղեկությունները կարող են ստացվել երկու հիմնական ուղղություններով՝ հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող տարբեր հաշվարկների, հաշվետվությունների, տեղեկությունների միջոցով, և, տարբեր պետական մարմիններից և մասնավոր առևտրային կազմակերպություններից:

Ստորև ընդհանուր գծերով ներկայացվում են պետական այն մարմինները, որոնց հետ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայությունը գտնվում է սերտ համագործակցության մեջ, և որոնցից ստանում է պարբերաբար տեղեկատվություն տնտեսավարող սուբյեկտների գործունեության տարբեր բնագավառների և կոնկրետ գործարքների վերաբերյալ:

1. ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի կողմից²

1.2. ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեն յուրաքանչյուր ամիս ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայությանն է տրամադրում տեղեկություններ տնտեսավարող սուբյեկտների մաքսային գործարքների վերաբերյալ, մասնավորապես,

- «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով կատարվող ձևակերպումների, այդ թվում՝ գանձված հարկերի, հաստատագրված վճարների և մաքսատուրքի վերաբերյալ,
- «տարանցիկ փոխադրում», «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «ժամանակավոր ներմուծում», «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար», «արտահանում՝ ազատ շրջանառության համար» և «վերաարտահանում» մաքսային ռեժիմներով կատարվող ձևակերպումների մասին,
- օպերատիվ այլ տեղեկատվություն՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ հարցումների հիման վրա:

2. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից³

2.1. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության մարմիններին է տրամադրում տեղեկություններ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող գրանցումների մասին:

- Իրավաբանական անձանց գրանցում իրականացնող այլ լիազորված մարմինները նույնպես, յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն են հայտնում տեղեկություններ իրենց կողմից իրականացված գրանցումների մասին⁴:

3. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից, տարբեր տեղեկագրերի տեսքով, մասնավորապես՝

- 3.1. Ամսական տեղեկագրեր Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների (գների ինդեքսի) վերաբերյալ,
- 3.2. Ամսական տեղեկագրեր Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ և այլն:

2 ՀՀ կառավարության 1997թ. հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությանը տեղեկություններ հաղորդելու (տրամադրելու) մասին» թիվ 294 որոշում

3 ՀՀ կառավարության 24 հուլիսի 1997թ., թիվ 294 որոշում

4 ՀՀ կառավարության 24 հուլիսի 1997թ., թիվ 294 որոշում

4. Պետական տարբեր մարմինների կողմից՝

- 4.1. Լիցենզավորում իրականացնող լիազոր մարմինները յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն են հայտնում տեղեկություններ իրենց կողմից տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված բույլտվությունների (լիցենզիաների) վերաբերյալ⁵,
- 4.2. ՀՀ ոստիկանությունը և ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը՝ ըստ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարցումների տրամադրում են տեղեկություններ ֆիզիկական անձանց բնակության (հաշվառման) վայրի, անձնագրային տվյալների, ինչպես նաև իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին, անհատ ձեռնարկատերերին տրված կնիքների, դրոշմակնիքների վերաբերյալ,
- 4.3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը յուրաքանչյուր ամսվա տվյալներով տրամադրում է տեղեկատվություն ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից իրականացվող՝ չձևակերպված աշխատողների բացահայտմանն ու վարձու աշխատողների աշխատանքի ընդունելու, նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրելու, աշխատանքից ազատելու վերաբերյալ հրամանագիրքը վարելու և պահպանելու կարգի ճշտությանն ուղղված ստուգումների մասին⁶,
 - օպերատիվ այլ տեղեկատվություն՝ հարկային մարմնի հարցումների հիման վրա:

5. ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերը համակարգող հանձնաժողովի կողմից՝

- 5.1. Տեղեկատվություն որպես բարեգործական ծրագիր կամ մարդասիրական օգնություն որակված ծրագրերի մասին ընդունված որոշումների վերաբերյալ (կազմակերպությունների նկատմամբ ԱԱՀ-ի արտոնություններ կիրառելու նպատակով՝ համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի): Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշմամբ:

Այլ տեղեկություններ՝

1. Միջազգային տարբեր կազմակերպությունների (USAID, WB, «Լինսի» հիմնադրամ և այլն) կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ (արտոնությունների համար հիմք հանդիսացող «ազատման» տեղեկանքների տեսքով),
2. Հարկ վճարողի գործունեության կամ նրա կողմից իրականացված առանձին գործարքների վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական համաձայնագրերի հիման վրա այլ պետությունների հարկային կամ մաքսային մարմիններին կատարվող հարցումներ,
3. ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության ընթացիկ աշխատանքային գործունեության ընթացքում ծագող հարաբերությունների և գործնական անհրաժեշտության դեպքում՝ հարցումներ տարբեր պետական մարմիններ, առևտրային կազմակերպություններ և այլն:

Բացի վերը նշված տեղեկություններից, որոնք կուտակվում են հարկային մարմնում, հարկ վճարողների վերաբերյալ տեղեկությունների գերակշիռ մասը հարկային մարմին են ներկայացնում իրենք՝ հարկ վճարողները՝

- ՀՀ հարկային օրենսդրությամբ և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով նախատեսված հաշվարկներ, հաշվետվություններ, տեղեկություններ, հայտարարություններ և այլն,
- «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի «Որոշ ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվությունները հարկային մարմիններ ներկայացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 299 որոշում,

5 ՀՀ կառավարության 24 հուլիսի 1997թ., թիվ 294 որոշում

6 ՀՀ կառավարության 24 հուլիսի 1997թ., թիվ 294 որոշում

- ՀՀ կառավարության որոշումների հիման վրա հաստատագրված վճարով հարկման ենթակա գործունեության որոշ տեսակներով զբաղվելու դեպքում տեղեկությունների ներկայացում, մասնավորապես՝
 - ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի «Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից հարկային մարմին ներկայացվող տեղեկությունների մասին» թիվ 484-Ն որոշում,
 - ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի «Առևտրի իրականացման վայրի (տոնավաճառ, շուկա և այլն) կազմակերպիչների կողմից առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնողների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու մասին» թիվ 298 որոշում և այլն:

Կան նաև տեղեկություններ, որոնք հարկային մարմինի կողմից կարող են ստացվել միայն օրենքով սահմանված կարգով և դեպքերում՝ գրավոր հարցումների հիման վրա: Այդ տեղեկությունների թվին է պատկանում հարկ վճարողների բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ իրենց աշխատանքային առօրյայում հարկային տեսչությունները (այդ թվում՝ բոլոր հարկային ծառայողները)՝ իրենց կողմից սպասարկվող տնտեսավարող սուբյեկտների բանկային գաղտնիքներին (մասնավորապես նրանց բանկային հաշիվներին) որևէ հասանելիություն չունեն: Ծառայողական անհրաժեշտության դեպքում (ստուգումներ, ուսումնասիրություններ, օպերատիվ-հետախուզական գործունեություն և այլն) միայն հարկային մարմինը կարող է օրենքով սահմանված կարգով ստանալ այդ տեղեկատվությունը:

Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի առևտրային գաղտնիքը և այլն:

Հարկային մարմնում հարկ վճարողների վերաբերյալ առկա են նաև տեղեկություններ, որոնք հանդիսանում են հարկային գաղտնիք և ենթակա չեն հրապարակման: Համաձայն օրենքի, հարկային գաղտնիք է հանդիսանում հարկ վճարողի կամ ապահովագրության վճարների մասին օրենսդրության պահանջների խախտման կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկություն, բացառությամբ՝

- հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,
- հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,
- հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների,
- հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին օրենսդրության պահանջների խախտման և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների,
- հարկ վճարողի գործունեության վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական համաձայնագրերի հիման վրա այլ պետությունների հարկային (մաքսային) մարմիններին ներկայացվող տեղեկությունների:

Հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների օգտագործման, տրամադրման և հրապարակման դեպքերը սահմանվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ:

Հարկային մարմնի, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների գործունեության թափանցիկության ապահովման նպատակով «Հարկերի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանվել է տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ այն տեղեկությունների ցանկը, որոնք պարբերաբար՝ եռամսյակային կամ տարեկան կտրվածքով, տպագրվում են զանգվածային լրատվամիջոցներում և ՀՀ ԿԱ ՀՊԾ պաշտոնական ինտերնետ կայքում: ՀՀ կառավարության սահմանած ձևով և կարգով, ցանկերի տեսքով հրապարակվում են տեղեկություններ, մասնավորապես՝

1. Մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը՝

- հաշվետու տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների վերաբերյալ,

- օգտակար հանածոների արդյունահանման լիցենզիա ունեցող, սակայն գործունեություն չիրականացնելու մասին հայտարարություն կամ գրոյական հաշվարկ-հաշվետվություններ ներկայացրած հարկ վճարողների վերաբերյալ,
- «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով շահութահարկի հիսուն և հարյուր տոկոս նվազեցման արտոնությունից օգտվող օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտ կազմակերպությունների վերաբերյալ,
- հաշվետու տարվա արդյունքներով ՀՀ պետական բյուջե 50 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած կազմակերպությունների և 3 մլն դրամ և ավելի եկամտահարկ վճարած հարկային գործակալների վերաբերյալ,
- ՀՀ պետական բյուջե 1.0 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած բանկերի և նրանց կողմից վճարված շահութահարկի մեծության վերաբերյալ,
- պարզեցված հարկ վճարողներին պատկանող խանութների մասով ցույց տված 50.0 մլն. դրամ և ավելի գումարի չափով իրացման շրջանառություն ունեցող և հաշվետու տարվա ընթացքում 15.0 մլն դրամը գերազանցող ապրանքային մնացորդ ունեցող և հարկման ընդհանուր կարգին անցած պարզեցված հարկ վճարողների վերաբերյալ,
- 1 մլն դրամ և ավելի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների պարտավորություններ կուտակած ապահովադիրների վերաբերյալ:

2. Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝

- առաջին 300 խոշոր հարկ վճարողների ցանկերը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով (1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը՝ հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում),
- 3 մլն դրամ և ավելի պարտադիր սոցիալական ապահովագրության վճար վճարած առաջին 300 խոշոր ապահովադիրների (1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը՝ հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում) և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մեծության վերաբերյալ,
- 100 և ավելի աշխատողների միջին ցուցակային թիվ հայտարարագրած՝ ապահովադիր հանդիսացող առևտրային կազմակերպությունների վերաբերյալ:

5.

ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՆՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարկ վճարողն իրավունք ունի գանգատարկել հարկային մարմնի կամ հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները կամ անգործությունը⁷:

Ընդ որում, հարկ վճարողը իրավունք ունի հարկային մարմնի կամ հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները գանգատարկել ինչպես հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին (այսուհետ՝ Գանգատարկման հանձնաժողով), այնպես էլ բողոքարկել դատարան:

Գանգատարկման ժամկետները

Հարկային մարմնի կամ հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները կամ անգործությունը գանգատարկելու նպատակով հարկ վճարողը 30 օրվա ընթացքում կարող է Գանգատարկման հանձնաժողով ներկայացնել իր համապատասխան դիմում-գանգատը:

Գանգատարկման հանձնաժողով պարտավոր է ոչ ուշ, քան դիմում-գանգատն ստացվելու օրվանից 30 օրվա ընթացքում քննության առնել այն և ընդունել այդ մասին համապատասխան որոշում: Իսկ 30 օրվա ժամկետի հաշվարկն սկսվում է դիմում-գանգատը հարկային մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից:

Գանգատարկման հանձնաժողովը

Գանգատարկման հանձնաժողովը հարկային մարմնի ղեկավարի կողմից ձևավորվող, վերադաս հարկային մարմնում մշտապես գործող մարմին է, որը բաղկացած է հանձնաժողովի նախագահից և ութ անդամից, որոնք իրենց աշխատանքը հանձնաժողովում համատեղում են իրենց զբաղեցրած հարկային ծառայության պաշտոնների հետ: Գանգատարկման հանձնաժողովի որոշումներն իրավագոր են, եթե այդ որոշումների կայացմանը մասնակցել է առնվազն 7 հոգի: Որոշումները կայացվում են բաց քվեարկությամբ, պարզ մեծամասնության ձևով:

Գանգատի քննարկումը

Դիմում-գանգատ ներկայացրած հարկ վճարողը Գանգատարկման հանձնաժողովի կողմից նախապես ծանուցվում է համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին: Գանգատարկման հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել դիմում-գանգատ ներկայացրած հարկ վճարողը, հարկ վճարողի գլխավոր հաշվապահը և հարկ վճարողի լիազորած անձը (մասնագետը): Գանգատարկման հանձնաժողովի նիստի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, Գանգատարկման հանձնաժողովը հարկ վճարողին ուղարկում է դիմում-գանգատի վերաբերյալ հանձնաժողովի կայացրած որոշումը:

Ուշադրություն

▪ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե հարկ վճարողը ներկայացրել է իր մոտ անցկացվող ստուգումների վերաբերյալ դիմում-բողոք, ապա մինչև դիմում-բողոքի նկատմամբ պատասխան ստանալը նա կարող է թույլ չտալ շարունակելու ստուգումը, բացառությամբ հարկային մարմինների կողմից ակցիզային դրոշմանիշների և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, հաստատագրված վճարների մասին օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների, տարադրամի փոխանակման կետերի կամ արժութային դիլերների, առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների գրանցման, առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման, արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և այդ օրենքների հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի կիրառման, տարադրամի փոխանակման կետերի կամ արժութային դիլերների կողմից արտարժույթի առքուվաճառքի գործառնությունների գրանցման պարզեցված հարկ վճարողների մոտ իրենց պատկանող ապրանքային մնացորդների, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների ճշտությանն ուղղված դեպքերում իրականացվող ստուգումների:

7 «Հարկերի մասին» ՀՀ օրենք, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք

- Ստուգման հետ կապված հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների գանգատի վերաբերյալ Գանգատարկման հանձնաժողովի կողմից պատասխան չտրվելու դեպքում դիմում-գանգատում բերված փաստարկները համարվում են ընդունված:
- Հարկային մարմնի կամ հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության գանգատարկումը չի դադարեցնում հարկերի գանձումը:
- Գանգատարկման հանձնաժողովը ընդունած որոշմանը չհամաձայնվելու դեպքում հարկ վճարողը իրավունք ունի բողոքարկել դատարան:

Օգտակար է իմանալ

Հարկային մարմնի այն գործողությունների գանգատարկումը, որոնք կապված են վարչական տու- գանքի նշանակման հետ, կատարվում է վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրա- պետության օրենսդրությանը համապատասխան:

Հարկային մարմնի կամ հարկային մարմնի պաշտոնատար անձանց կողմից հարկային հարաբերու- թյունները կարգավորող օրենսդրության դրույթների խախտումների հետևանքով հարկ վճարողին հաս- րած վնասը հատուցվում է ՀՀ պետական բյուջեից:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
հարկային պետական ծառայության
գանգատարկման հանձնաժողովին

«Սատուրն» սահմանափակ պատասխանատվության ընկերությունից
ՀՎՀՀ՝ XXXXXXXXX
(ք.Երևան, Աբովյան 159, հեռ 88 88 88)

Դ Ի Մ Ո Ւ Մ - Գ Ա Ն Գ Ա Տ

ՀՀ ԿԱ ՀՊԾ Սպանդարյանի հարկային տեսչության 02.10.2006թ.
թիվ 23 ստուգման ակտի դեմ

ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության կողմից, ի դեմս՝ Սպանդարյանի հարկային տեսչու- րյան, ս.թ. սեպտեմբերի 8-ից մինչև հոկտեմբերի 2-ը «Սատուրն» սահմանափակ պատասխանատվության ընկերությունում կատարվել է ձեռնարկատիրական գործունեության առարկաների (առաքվող, տրամադր- վող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների) գրանցման ճշտության ստուգում, որի արդյունքում 02.10.2006թ. կազմված թիվ 23 ստուգման ակտով արձանագրվել է 200,0 հզ. դրամի չափով տուգանք:

Ստուգման 12-րդ կետով արձանագրվել է, որ ընկերության կողմից ստուգվող ժամանակաշրջանում չի լրացվել գրանցման գրքի օրական հասույթների գրանցման մասը: Այս փաստը ստուգողների կողմից որակվել որպես խախտում և կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված՝ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու համար տուգանք՝ չգրանցված 800,0 հզ. դրամ ամբողջ արժեքի 25 տոկոսի չափով:

Համաձայնվելով այն փաստի հետ, որ ընկերության կողմից գրանցման գրքի օրական հասույթների գրանցման մասում գրանցում չի կատարվել, սակայն համաձայն չենք այդ փաստը որպես խախտում որա- կելու հետ այն հիմնավորմամբ, որ ընկերությունը առաջնորդվելով ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառվող արտադրանքի, ապրանքների եւ դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) կարգը հաստատելու մասին» թիվ 315 որոշմամբ հաս- տատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետով գրանցման գրքի օրական հասույթների գրանցման մասը չի լրացրել, քանի որ կիրառում է հսկիչ-դրամարկղային մեքենա:

Հիմք ընդունելով թվարկված փաստարկները, գտնում ենք, որ ՀՀ ԿԱ ՀՊԾ Սպանդարյանի հարկային տեսչության 02.10.2006թ. թիվ 23 ստուգման ակտով լրացուցիչ հարկային պարտավորությունների առա- ջադրումն անհիմն է, խնդրում ենք այն ճանաչել անվավեր:

«Սատուրն» ՍՊԸ տնօրեն՝ Ա.Վարդանյան

06.10.2006թ.

6.

ՃՃԳՐՏՎԱԾ ԸԱԾՎԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ո՞ր դեպքերում հարկ վճարողը կարող է ներկայացնել ճշգրտված հաշվարկ

Հարկ վճարողը նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներում, հաշվետվություններում, հայտարարագրերում ինքնուրույն սխալներ հայտնաբերելու դեպքում կարող է իր հաշվառման հարկային տեսչություն ներկայացնել ճշտված հաշվարկ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

Ինչպիսի՞ սահմանափակումներ գոյություն ունեն

Հարկ վճարողը ստուգվող կամ արդեն ստուգված ժամանակաշրջաններին վերաբերող հարկային հաշվարկների ճշտում չի կարող իրականացնել հետևյալ դեպքերում.

- հարկային մարմինների կողմից հարկ վճարողի մոտ իրականացվող ստուգումների ընթացքում,
- հարկային մարմինների կողմից հարկ վճարողի մոտ ստուգումների ավարտից հետո:

Օրինակ. «Սատուրն» ՍՊԸ-ում ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության Սպանդարյանի ՀՏ վերահսկողության բաժնի կողմից իրականացվում է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Ստուգվող ժամանակաշրջանն է 01.01.2004 - 01.01.2005թթ., ստուգման ժամկետներն են 01.05.2005-19.05.2005թթ.: «Սատուրն» ՍՊԸ-ն 2005թ. ապրիլի 14-ին ներկայացրել է շահութահարկի տարեկան հաշվարկ 2004 թվականի համար և 2006թ. ապրիլի 10-ին ներկայացրել է շահութահարկի տարեկան հաշվարկ 2005 թվականի համար: «Սատուրն» ՍՊԸ-ն մայիսի 10-ին Սպանդարյանի ՀՏ հարկ վճարողների սպասարկման բաժին է ներկայացրել է 2004 և 2005 թվականների շահութահարկի ճշգրտված հաշվարկներ:

Այս դեպքում Սպանդարյանի ՀՏ-ի կողմից ընդունվում է միայն 2004 թվականի համար ներկայացված շահութահարկի ճշգրտված հաշվարկը:

Ուշադրություն.

Եկամտահարկի տարեկան հայտարարագիր ներկայացնող ֆիզիկական անձինք հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում իրավունք ունեն ճշգրտումներ մտցնել դրանցում արտացոլված տվյալներում:

ԱԱՀ-ի գծով հաշվերկներում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում ճշգրտված հաշվարկներ չեն ներկայացվում՝ հաշիվ դուրս գրելու իրավունք չունեցող հարկ վճարողների կողմից դուրս գրված հարկային հաշիվների մասով:

Հարկ վճարողի կողմից ակցիզային հարկի գծով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար մեկից ավելի յուրաքանչյուր ճշգրտված հաշվարկի ներկայացման դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ 200 հազար դրամի չափով:

7.

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՃՎԵՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԵՐ (ԶԵՎԱԹՂԹԵՐ)

1. Ընդհանուր հարկման դաշտում գործող կազմակերպությունների համար.

1.1. Շահութահարկ

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ <i>(«Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի հավելված)</i>	Փաստաթղթի համարը <i>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</i>										
1. Հարկ վճարողի անվանումը	2. Հարկ վճարողի հասցեն										
3. ՀՎՀՀ <table border="1" style="width: 100%; height: 20px;"> <tr> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> </tr> </table>											4. Հեռախոսի համարը
5. Հաշվետու տարի <table border="1" style="width: 100%; height: 20px;"> <tr> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> </tr> </table>											6. Ներկայացման ամսաթիվը

Ցուցանիշները	Տողը	Գումարը
1. Հաշվետու տարվա համախառն եկամուտը		
ա) ապրանքների իրացումից հասույթը	0101	
բ) արտադրանքի իրացումից հասույթը	0102	
գ) ծառայությունների մատուցումից հասույթը	0103	
դ) հանձնարարության, կոմիսիայի և գործակալության հիմունքներով իրականացված գործարքներից հասույթը	0104	
ե) հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների, հումքի (նյութի) և այլ ակտիվների իրացումից հասույթը	0105	
զ) տոկոսները	0106	
է) վարձավճարները	0107	
ը) ռոյալթիները	0108	
թ) ստացած շահաբաժինները	0109	
ժ) ապահովագրական հատույունները	0110	
ժա) ապահովագրական պահուստներից հատույման նպատակով վերադարձվող միջոցները	0111	
ժբ) անհատույց ստացված ակտիվները	0112	
ժգ) պարտավորությունների զեղչումից (ներումից) ստացվող եկամուտները	0113	
ժդ) պատճառված վնասի (կրած կորստի) հատույունից ստացվող եկամուտները	0114	
ժե) տույժերի, տուգանքների և գույքային այլ սանկցիաների տեսքով ստացվող եկամուտները	0115	
ժզ) գույքագրման արդյունքներով հայտնաբերված ակտիվների ավելյուկը	0116	
ժէ) դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները	0117	
ժը) նախկինում դուրս գրված (այդ թվում՝ մասնակի) դեբիտորական պարտքերի (վարկերի) հետ ձևակերպման (մարման, պահուստի ճշգրտման) գումարները	0118	
ժֆ) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան նախորդող 3 տարիներում պակաս (ավել) ցույց տրված եկամուտները (նվազեցումները)	0119	
- այդ թվում՝		

ստուգմամբ հայտնաբերված	0119Ա	
ժժ) այլ եկամուտները	0120	
Ընդամենը համախառն եկամուտը՝ եկամուտների հանրագումարը (0101-ից 0120 տողերի (բացառությամբ՝ 0119Ա տողի) հանրագումարը)	0100	
- այդ թվում՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով	0100Ա	
2. Համախառն եկամտից նվազեցումները		
2.1. Համախառն եկամտից նվազեցվող ծախսերը		
ա) իրացված ապրանքների ձեռքբերման հետ անմիջականորեն կապված ծախսերը	0201	()
բ) իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերը	0202	()
գ) իրացված ծառայությունների, հանձնարարության, կոմիսիայի և գործակալության գործարքների հետ անմիջականորեն կապված ծախսերը	0203	()
դ) իրացված հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների, հումքի (նյութի) և այլ ակտիվների մնացորդային արժեքը	0204	()
Ընդամենը համախառն եկամտից իրացմանը համապատասխան նվազեցվող (ուղղակի) ծախսերը (0201-ից 0204 տողերի հանրագումարը)	0205	()
ե) գործունեության հետ կապված վարչական ծախսերը	0206	()
զ) ապրանքների, սեփական արտադրանքի և այլ ակտիվների, ծառայությունների իրացման հետ կապված ծախսերը	0207	()
է) ոչ արտադրական այլ ծախսերը	0208	()
ը) ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը	0209	()
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ժամանակաշրջանի ծախսերը (0206-ից 0209 տողերի հանրագումարը)	0210	()
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ծախսերը (տող0205+տող0210)	0220	()
2.2. Համախառն եկամտից նվազեցվող կորուստները		
ա) պատահական կորուստները	0231	()
բ) բնական կորուստները	0232	()
գ) փաստացի այլ կորուստները	0233	()
դ) բնական կամ փաստացի այլ կորուստների չափերը գերազանցող կորուստները («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 2-րդ մաս)	0234	()
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող կորուստները (0231-ից 0234 տողերի հանրագումարը)	0230	()
2.3. Համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումները		
ա) դուրս գրված (այդ թվում՝ մասնակի դուրս գրված) դեբիտորական պարտքերի (վարկերի) գումարները	0241	()
բ) նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարները	0242	()
գ) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան նախորդող 3 տարիներում ավել (պակաս) ցույց տրված եկամուտը (նվազեցումը)	0243	()
- այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված	0243Ա	()
դ) բարեգործական հատկացումները («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված, «ա» կետ)	0244	()
ե) ստացված շահաբաժինները	0245	()
զ) նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասը	0246	()

է) վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը	0247	()
ը) այլ նվազեցումները	0248	()
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումները (0241-ից 0248 տողերի (բացառությամբ՝ 0243Ա տողի) հանրագումարը)	0240	()
Ընդամենը համախառն եկամտից նվազեցումները (տող0220+տող0230+տող0240)	0200	()
- այդ թվում՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով	0200Ա	()

3. Հարկվող շահույթը (հարկային վնասը)		
ա) առանց ստուգման արդյունքների (տող0100-տող0100Ա-տող0119Ա)+(տող0200-տող0200Ա-տող0243Ա))	0301	
բ) ստուգման արդյունքները (տող0119Ա+տող0243Ա)	0302	
գ) ներառյալ ստուգման արդյունքները (տող0301+տող0302)	0300	
4. Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները	0400	()
5. Հարկվող շահույթը՝ հաշվի առած հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները (տող0300+տող0400)	0500	
6. Հաշվետու տարվա շահութահարկի գումարը (տող0500x20%)	0600	
- այդ թվում՝ ստուգմանը հայտնաբերված լրացուցիչ շահութահարկի գումարը	0600Ա	
7. Շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունները		
Նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարը	0701	()
Հաշվետու տարվանը վերաբերող՝ հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը	0702	()
Հաշվետու տարում ստացված՝ նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարները	0703	
Շահութահարկի գումարը՝ հաշվի առած շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը (տող0600+տող0702+տող0703)	0700	
Հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը (տող0701+տող0702+տող0703)	0700Ա	()
8. Օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարը		
Նախորդ տարիների շահութահարկի գումարից օտարերկրյա պետություններում վճարված հարկի չնվազեցված գումարը	0801	()
Հաշվետու տարում օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարի նվազեցվող մասը	0802	()
Օտարերկրյա պետություններում վճարված հարկի հաշվետու տարվա շահութահարկից նվազեցվող գումարը	0800	()
Օտարերկրյա պետություններում վճարված հարկի հաջորդ տարիներ փոխանցվող գումարը (տող0801+տող0802-տող0800)	0800Ա	()
9. Չեղչ սակագնով (անվճար) ծառայություններից չստացված եկամուտը		
Նախորդ տարիների շահութահարկի գումարից մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների չնվազեցված գումարը	0901	()
Հաշվետու տարում մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտները	0902	()
Մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների հաշվետու տարվա շահութահարկից նվազեցվող գումարը	0900	()

<i>Մատուցված ծառայությունների դիմաց չստացված եկամուտների հաջորդ տարիներ փոխանցվող գումարը (տող0901+տող0902-տող0900)</i>	0900Ա	()
10. Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց հետո (տող0700+տող0800+տող0900)	1000	
11. Շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները		
ա) գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված ռեզիդենտների համար սահմանված արտոնության գումարը	1101	()
բ) օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտների համար սահմանված արտոնության գումարը	1102	()
գ) ազատ տնտեսական գոտու կազմակերպչի համար սահմանված արտոնության գումարը	1103	()
դ) ազատ տնտեսական գոտու շահագործողների համար սահմանված արտոնության գումարը	1104	()
ե) շահութահարկի նվազեցման այլ արտոնությունները	1105	()
Շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունների հանրագումարը (տող1101+տող1102+տող1103+տող1104+տող1105)	1100	()
12. Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց և արտոնությունները կիրառելուց հետո (տող1000+տող1100)	1200	
13. ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը		
Շահութահարկի գումարը՝ արտոնությունները կիրառելուց հետո (տող0700+տող1100, եթե ռեզիդենտը չի օգտվում 100% արտոնությունից, կամ 0)	1301	
Հաշվետու տարում հաշվարկված նվազագույն շահութահարկի տարեկան գումարը	1302	
Լրացուցիչ վճարման ենթակա նվազագույն շահութահարկի գումարը (տող1302-տող1301), եթե (տող1302-տող1301)»0, կամ 0)	1303	
ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը (տող1200+տող1303)	1300	
14. Նվազագույն շահութահարկի վճարումները		
Նախորդ տարիներում վճարված և շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարը	1401	
Հաշվետու տարում վճարված և շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները	1402	
Հաջորդ տարիներ փոխանցվող՝ չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարը (տող 1401+տող1402)	1400	
15. Հաջորդ տարվա շահութահարկի կանխավճարների ամսական գումարը		
Շահութահարկի կանխավճարների ամսական գումարի հաշվարկման բազա (տող0700+տող0800)գ ¹⁾	1501	
Հաշվետու տարվա պարզեցված հարկի գումարների (այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված) մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարը	1502	
Հաշվետու տարվա հաստատագրված վճարի գումարների (այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված) մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարը	1503	
Հաջորդ տարվա շահութահարկի ամսական կանխավճարներին վերաբերող արտոնության գումարը¹⁾	1504	()
Հաջորդ տարվա շահութահարկի կանխավճարների ամսական գումարը ((տող1501+տող1502+տող1503):16+տող1504) գ ¹⁾	1500	

Հաշվետու տարվա հաշվարկված նվազագույն շահութահարկի գումարները՝ ըստ ամիսների

Աղյուսակ 1

Ամիս	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդամենը
Գումար													

ՀՀ կառավարության 19.12.2002թ. N 2052-Ն որոշմամբ հաստատված «Կազմակերպությունների (բացառությամբ՝ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման» կարգին համապատասխան.

Աղյուսակ 2

N	Դեբիտորական (կրեդիտորական) պարտքեր	Նախորդ տարի	Հաշվետու տարի
1	2	3	4
1	Պահուստի (պահուստաֆոնդի) ստեղծումը («Այո»/«Ոչ»)		
2	Պահուստի (պահուստաֆոնդի) մեծությունը		
3	Դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերի գումարը		
4	Դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարը		

Հարկման նպատակով հիմնական միջոցների ամորտիզացիոն ժամկետները

Աղյուսակ 3

	Հիմնական միջոցի անվանումը (խումբը)	Ամորտիզացիոն ժամկետ (ամիս)	
		Նախորդ տարի	Հաշվետու տարի
	2	3	4
0			

Հարկման նպատակով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետները

Աղյուսակ 4

N	Ոչ նյութական ակտիվի անվանումը (խումբը)	Ամորտիզացիոն ժամկետ (ամիս)	
		Նախորդ տարի	Նախորդ տարի
	2	3	4
0			

Համախառն եկամտից նվազեցվող ծախսերը՝ ըստ տարրերի

Աղյուսակ 5

ա) Ծախսեր, որոնց համար սահմանված են չափեր	Չափը	Գումարը
- վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար վճարները		
- ՀՀ տարածքից դուրս կադրերի պատրաստման համար ծախսերը		
- ՀՀ տարածքից դուրս կադրերի վերապատրաստման համար ծախսերը		
- ներկայացուցչական ծախսերը		
- ՀՀ տարածքից դուրս գովազդային ծախսերը		
- ՀՀ տարածքից դուրս մարքեթինգի ծախսերը		
- ՀՀ տարածքից դուրս գործուղման ծախսերը		
- ՀՀ տարածքում օրապահիկի ծախսերը		
- դաշտային բավարարման ծախսերը		
- հատուկ սննդի համար կատարված ծախսերը		
- արտահագուստի և այլ հանդերձանքի համար կատարված ծախսերը		
- հաշվեկշռում գտնվող օբյեկտների պահպանման ծախսերը		
- աշխատակիցներին փոխհատուցումների համար կատարված ծախսերը		
- վարկերի և փոխառությունների տոկոսները		
բ) Ժամանակաշրջանի ծախսերից՝		Գումարը
- աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները		
- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները		
- հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները		
- ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները		
- ապահովագրական վճարները		
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) գույքահարկը		
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) հողի հարկը		
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) ավելացված արժեքի հարկը		
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) պետական տուրքերը		
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) տեղական տուրքերը և վճարները		
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) այլ պարտադիր վճարները		
- ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսները		
- գործառնական վարձակալության դիմաց վարձավճարները		
- այլ անձանց պատճառած վնասի հատուցումը		
- տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները		
- հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերը		
- աշխատողների հավաքագրման ծախսերը		
գ) Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքները		Գումարը
- գիտահետազոտական աշխատանքները		
- փորձակոնստրուկտորական աշխատանքները		

**Ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները
և հարկային բազաները (հաշվետու տարվա վերջում)**

Աղյուսակ 6

N	Ակտիվ / Պարտավորություն	Հաշվապահական հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
2	3	4	
1	Հիմնական միջոցներ		
2	Ոչ նյութական ակտիվներ		
3	Ներդրումներ (այդ թվում՝ տրված վարկեր, փոխառություններ)		
4	Հումք (նյութեր), կիսապատրաստուկներ		
5	Աճեցվող և բավող կենդանիներ		
6	Արագամաշ առարկաներ		
7	Անավարտ արտադրություն		
8	Պատրաստի արտադրանք		
9	Ապրանքներ		
10	Տրված կանխավճարներ		
11	Գեբիտորական պարտքեր բյուջեներին		
12	Գեբիտորական պարտքեր սոցիալական վճարների մասով		
13	Գեբիտորական պարտքեր աշխատավարձի մասով		
14	Գեբիտորական պարտքեր շահաբաժինների մասով		
15	Այլ դեբիտորական պարտքեր		
16	Առհաշիվ անձանց տրված կամ չփոխհատուցված գումարներ		
17	Գրամական միջոցներ		
18	Արժեթղթեր		
19	Այլ ակտիվներ		
20	Ընդամենը ակտիվներ (տող1+...+տող19)		
21	Ստացված վարկեր և փոխառություններ		
22	Ստացված կանխավճարներ		
23	Կրեդիտորական պարտքեր բյուջեներին		
24	Կրեդիտորական պարտքեր սոցիալական վճարների մասով		
25	Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի մասով		
26	Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների մասով		
27	Այլ կրեդիտորական պարտքեր		
28	Առհաշիվ անձանցից չվերադարձված գումարներ		
29	Կանոնադրական կապիտալի համալրված մասը		
30	Ընդամենը պարտավորություններ (տող21+...+տող29)		

Տնօրեն
(ազգանուն, անուն և ստորագրություն)

Հարկ վճարողի
կնիքը՝

Հաշվապահ
(ազգանուն, անուն և ստորագրություն)

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Շահութահարկի հաշվարկի (ներառյալ՝ դրա անբաժանելի մասը կազմող 1-ից 6-րդ աղյուսակներում) լրացման (հաշվարկում թվային տվյալները լրացվում են հազար դրամներով, իսկ շահութահարկի հաշվարկին մասնակցող հանվող գումարները (բացասական մեծությունները) ցույց են տրվում փակագծերի մեջ)

Շահութահարկի հաշվարկում (այսուհետ՝ Հաշվարկ) լրացվում են.

- «Փաստաթղթի համարը» մասում՝ հարկային մարմնում հարկ վճարողի (ռեզիդենտի) առկա անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը,
- «Հարկ վճարողի անվանումը» մասում՝ ռեզիդենտի ֆիրմային անվանումը և կազմակերպա-իրավական ձևը,
- «Հարկ վճարողի հասցեն» մասում՝ ռեզիդենտի իրավաբանական հասցեն,
- «ՀՎՀՀ» մասում՝ ռեզիդենտի հարկ վճարողի հաշվառման համարը.
- «Հեռախոսի համարը» մասում՝ ռեզիդենտի տնօրենի (ղեկավարի) և (կամ) հաշվապահի հեռախոսի համարը,
- «Հաշվետու տարի» մասում՝ այն տարին, որի համար լրացվում է Հաշվարկը,
- «Ներկայացման ամսաթիվը» մասում՝ ռեզիդենտի կողմից հարկային մարմին Հաշվարկը ներկայացնելու ամսաթիվը:

Հաշվարկի վերջին էջի համապատասխան մասում նշվում են ռեզիդենտի ղեկավարի և հաշվապահի անունը (ազգանունը), որոնք ստորագրում են Հաշվարկը, և Հաշվարկը կնքվում է ռեզիդենտի կնիքով:

1. Հաշվարկի 1-ին՝ բաժնում («Հաշվետու տարվա համախառն եկամուտը») ցույց է տրվում հաշվետու ժամանակաշրջանում ռեզիդենտի գործունեության արդյունքում ստացված համախառն եկամուտը՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ, 24-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներին համապատասխան: Այս բաժնում չեն ներառվում Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն եկամուտ չհամարվող տարրերը:

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

- 0101 **տող**՝ ապրանքների իրացումից (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության դեպքում) ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):
- 0102 **տող**՝ սեփական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):
- 0103 **տող**՝ ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):
- 0104 **տող**՝ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված հանձնարարության, կոմիսիայի և գործակալության գործարքներից միջնորդավճարների ձևով (զանձույթ, պարզևավճար և հատուցման համանման այլ ձևերով) ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):
- 0105 **տող**՝ հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների, հումքի (նյութի) և այլ ակտիվների իրացումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):
- 0106 **տող**՝ վարկի, փոխառության, ֆինանսական վարձակալության դիմաց ստացվող տոկոսները և այլ հատուցումը:
- 0107 **տող**՝ գործառնական վարձակալության դիմաց ստացվող վճարները և այլ հատուցումը (վարձավճարները):
- 0108 **տող**՝ ստացվող ռոյալթիները:
- 0109 **տող**՝ ստացված շահաբաժինները:
- 0110 **տող**՝ ապահովագրական հատուցումները, որոնք ստացվել են ապահովագրության (վերաապահովագրության) պայմանագրերի համաձայն:
- 0111 **տող**՝ ապահովագրական պահուստներից հատուցման նպատակով վերադարձվող միջոցները:
- 0112 **տող**՝ անհատույց ստացված ակտիվները (այս տողը լրացվում է միայն առևտրային կազմակերպությունների կողմից), ընդ որում՝ անհատույց ստացված դրամական միջոցների և հողամասերի համար այս տողը լրացվում է դրանց ստացման հաշվետու տարում, իսկ անհատույց ստացված այլ ակտիվների համար՝ այն հաշվետու տարում, երբ դրանք ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ (անկախ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից):
- 0113 **տող**՝ պարտավորությունների զեղչումից կամ ներումից ստացվող եկամուտները (բացառությամբ՝ օրենքով տրվող հարկային արտոնությունների):
- 0114 **տող**՝ պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից ստացվող եկամուտները (իրական վնասը, բաց թողնված օգուտը):
- 0115 **տող**՝ տույժեր, տուգանքներ) և գույքային այլ սանկցիաների տեսքով ստացվող եկամուտները:
- 0116 **տող**՝ գույքագրման արդյունքներով հայտնաբերված ակտիվների ավելյուկը:

0117 տող՝ սահմանված կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները (բանկերի և վարկային կազմակերպությունների համար՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 15.07.2003թ. N 248-Ն որոշմամբ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 11.08.2003թ. N 662-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման» կարգի համաձայն, այլ կազմակերպությունների համար՝ ՀՀ կառավարության 19.12.2002թ. N 2052-Ն որոշմամբ հաստատված «Կազմակերպությունների (բացառությամբ՝ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման» կարգի համաձայն):

0118 տող՝ նախկինում դուրս գրված (այդ թվում՝ մասնակի) դեբիտորական պարտքերի (վարկերի) հետ ձևակերպման (այդ թվում՝ մարման) և դեբիտորական պարտքերի (վարկերի) հնարավոր կորուստների պահուստների ճշգրտման արդյունքում եկամուտներին վերագրվող գումարները (բանկերի և վարկային կազմակերպությունների համար՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 27.04.1999թ. N 63 որոշմամբ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 04.06.1999թ. N 214-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն, այլ կազմակերպությունների համար՝ ՀՀ կառավարության 19.12.2002թ. N 2052-Ն որոշմամբ հաստատված «Կազմակերպությունների (բացառությամբ՝ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման ու դուրսգրման» կարգի համաձայն):

0119 տող՝ հաշվետու տարում հայտնաբերված (այդ թվում՝ ստուգմամբ)՝ նախորդ 3 տարիներում պակաս ցույց տրված եկամուտները կամ ավել ցույց տրված նվազեցումները:

0119Ա տող՝ ստուգմամբ հայտնաբերված՝ հաշվետու տարվանը նախորդող 3 տարիներում պակաս ցույց տրված եկամուտները կամ ավել ցույց տրված նվազեցումները (անկախ այդ եկամուտների և նվազեցումների տեսակից կամ հաշվապահական հաշվառմանը համապատասխան՝ դրանց որպես եկամուտ կամ ծախս ճանաչումից):

0120 տող՝ ստացվող այլ եկամուտները:

0100 տող՝ ստացվող բոլոր եկամուտները (համախառն եկամուտը)՝ որպես 0101-ից 0119 տողերի (բացառությամբ՝ 0120գ1) Ա տողի) հանրագումար: Այդ տողում ներառվում են «Հաստատագրված վճարների մասին» և «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հաշվետու ժամանակաշրջանում ստացվող եկամուտները: Այդ տողում չեն ներառվում «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաշվետու տարում պարզեցված հարկով հարկվող ժամանակաշրջանում ստացվող եկամուտները:

0100Ա տող՝ «Հաստատագրված վճարների մասին» և «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով ստացվող եկամուտները:

2. Հաշվարկի 2-րդ բաժնում («Համախառն եկամտից նվազեցումներ») ցույց են տրվում հաշվետու տարում ռեզիդենտի համախառն եկամտից կատարված՝ Օրենքի 9-րդ հոդվածով դասակարգված նվազեցումները (ծախսեր, կորուստներ, այլ նվազեցումներ):

2.1. Հաշվարկի 2.1 ենթաբաժնում («Համախառն եկամտից նվազեցվող ծախսեր») ցույց են տրվում հաշվետու տարում ռեզիդենտի համախառն եկամտից նվազեցվող ծախսերը՝ Օրենքի 10-րդ, 12-17-րդ, 19-րդ, 32-րդ, 42-րդ և 43-րդ (բանկերի և վարկային կազմակերպությունների համար՝ նաև 30-րդ, իսկ ապահովագրական կազմակերպությունների համար՝ նաև 31-րդ) հոդվածներին համապատասխան: Այս ենթաբաժնում չեն ներառվում Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ծախս չհամարվող տարրերը և 16-րդ հոդվածի համաձայն համախառն եկամտից չնվազեցվող ծախսերը:

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0201 տող՝ իրացված ապրանքների ձեռքբերման հետ անմիջականորեն կապված ծախսերը:

0202 տող՝ իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերը:

0203 տող՝ մատուցված ծառայությունների, հանձնարարության, կոմիսիայի և գործակալության գործարքների հետ անմիջականորեն կապված ծախսերը:

0204 տող՝ իրացված հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների, հումքի (նյութի) և այլ ակտիվների մնացորդային արժեքը (հարկային բազա), ընդ որում՝ որպես իրացված մաշվող ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ) մնացորդային արժեք (հարկային բազա) ընդունվում է այդ ակտիվների սկզբնական արժեքի և Օրենքով սահմանված կարգով հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերությունը (հաշվի առած՝ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները), իսկ այլ ակտիվների դեպքում՝ այդ ակտիվների սկզբնական արժեքը (հաշվի առած՝ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները):

0205 տող՝ իրացված ապրանքների, սեփական արտադրանքի և այլ ակտիվների, մատուցված ծառայությունների, հանձնարարության, կոմիսիայի և գործակալության գործարքների հետ անմիջականորեն կապված ծախսերը (ուղղակի ծախսեր)՝ որպես 0201-ից 0204 տողերի հանրագումար:

0206 տող՝ ռեզիդենտի գործունեության հետ կապված վարչական ծախսերը:

0207 տող՝ ապրանքների, արտադրանքի և այլ ակտիվների, ծառայությունների, հանձնարարության, կոմիսիայի և գործակալության գործարքների իրացման հետ կապված ծախսերը:

0208 տող՝ ռեզիդենտի կողմից կատարված ոչ արտադրական այլ ծախսերը:

0209 տող՝ ռեզիդենտի ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը:

0210 տող՝ ռեզիդենտի կողմից կատարված վարչական, իրացման և ոչ արտադրական այլ ծախսերը, ինչպես նաև ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը (ժամանակաշրջանի ծախսեր)՝ որպես 0206-ից 0209 տողերի հանրագումար:

0220 տող՝ ռեզիդենտի կողմից կատարված ուղղակի և ժամանակաշրջանի ծախսերը՝ որպես 0205 և 0210 տողերի հանրագումար:

2.2. Հաշվարկի 2.2 ենթաբաժնում («Համախառն եկամտից նվազեցվող կորուստները») ցույց են տրվում հաշվետու տարում ռեզիդենտի համախառն եկամտից նվազեցվող (փաստաթղթերով հիմնավորված) փաստացի կորուստները՝ Օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներին համապատասխան:

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0231 տող՝ գույքի պատահական կորուստները:

0232 տող՝ գույքի բնական կորուստները (ՀՀ կառավարության 29.04.1999թ. «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի (բնական կորստի) չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման համաձայն բնական կորստի չափերը հաստատում են նախարարությունները (գերատեսչությունները)՝ համաձայնեցնելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հետ):

0233 տող՝ գույքի փաստացի այլ կորուստները (փաստացի այլ կորուստների չափերը սահմանում է ՀՀ կառավարությունը):

0234 տող՝ գույքի բնական կամ փաստացի այլ կորուստների չափերը գերազանցող (այդ թվում՝ այդպիսի չափեր սահմանված չլինելու դեպքում) կորուստները (վնաս պատճառողի կողմից կորուստն ամբողջությամբ կամ մաս-մաս կամովին կատուցելու դեպքում, վնաս պատճառած անձին չպարգելու հետևանքով նախաքննության մարմնի կողմից քրեական գործը կասեցնելու կամ կարճելու մասին որոշում ընդունելու դեպքում, անձին մեղավոր կամ անմեղ ճանաչելու դատավճիռ կայացնելու դեպքում):

0230 տող՝ ռեզիդենտի գույքի փաստացի կորուստները՝ որպես 0231-ից 0234 տողերի հանրագումար:

2.3. Հաշվարկի 2.3 ենթաբաժնում («Համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումները») ցույց են տրվում համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումները՝ Օրենքի 18-րդ, 20-րդ, 23-րդ, 25-29-րդ և 32-րդ (բանկերի և վարկային կազմակերպությունների համար՝ նաև 30-րդ, իսկ ապահովագրական կազմակերպությունների համար՝ նաև 31-րդ) հոդվածներին համապատասխան:

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0241 տող՝ սահմանված կարգով դուրս գրված (այդ թվում՝ մասնակի) դեբիտորական պարտքերի (վարկերի) և դեբիտորական պարտքերի (վարկերի) հնարավոր կորուստների պահուստների ճշգրտման արդյունքում նվազեցումներին վերագրվող գումարները (բանկերի և վարկային կազմակերպությունների համար՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 27.04.1999թ. N 63 որոշմամբ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 04.06.1999թ. N 214-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն, այլ կազմակերպությունների համար՝ ՀՀ կառավարության 19.12.2002թ. N 2052-Ն որոշմամբ հաստատված «Կազմակերպությունների (բացառությամբ՝ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման ու դուրսգրման» կարգի համաձայն):

0242 տող՝ նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարները (բանկերի և վարկային կազմակերպությունների համար՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 15.07.2003թ. N 248-Ն որոշմամբ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 11.08.2003թ. N 662-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման» կարգի համաձայն, այլ կազմակերպությունների համար՝ ՀՀ կառավարության 19.12.2002թ. N 2052-Ն որոշմամբ հաստատված «Կազմակերպությունների (բացառությամբ՝ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման» կարգի համաձայն):

0243 տող՝ հաշվետու տարում հայտնաբերված (այդ թվում՝ ստուգմամբ)՝ նախորդ 3 տարիներում ավել ցույց տրված եկամուտները կամ պակաս ցույց տրված նվազեցումները:

0243Ա տող՝ հաշվետու տարում ստուգմամբ հայտնաբերված՝ նախորդ 3 տարիներում ավել ցույց տրված եկամուտները կամ պակաս ցույց տրված նվազեցումները (անկախ այդ եկամուտների և նվազեցումների տեսակից կամ հաշվապահական հաշվառմանը համապատասխան՝ դրանց որպես ծախս կամ եկամուտ ճանաչումից):

0244 տող՝ ոչ առևտրային կազմակերպություններին, գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին և մանկատներին, ինչպես նաև հոգեբուժական և հակաթոքախտային դիսպանսերներին և հիվանդանոցներին փոխանցված (տրամադրված) միջոցները, նրանց մատուցված ծառայությունների արժեքը (համախառն եկամտի 0.25%-ի սահմաններում):

0245 տող՝ ստացված շահաբաժինները:

0246 տող՝ համախառն եկամտից նվազեցվող՝ նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասը (Օրենքի 25-րդ հոդվածին համապատասխան): Սույն նվազեցման կիրառման առումով համախառն եկամտից նվազեցումը կատարվում է միայն հարկային մարմին ներկայացված՝ նախորդ տարվա շահութահարկի հաշվարկի համապատասխան տողում հարկային վնասի գումարը ցույց տալու դեպքում:

0247 տող՝ ռեզիդենտի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը՝ Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն:

0248 տող՝ համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումները:

0240 տող՝ ռեզիդենտի այլ նվազեցումները՝ որպես 0241-ից 0248 տողերի (բացառությամբ՝ 0243Ա տողի) հանրագումար:

0200 տող՝ համախառն եկամտից կատարված բոլոր նվազեցումները՝ որպես 0220, 0230 և 0240 տողերի հանրագումար: Այդ տողում ներառվում են «Հաստատագրված վճարների մասին» և «Բենգինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հաշվետու տարում կատարված նվազեցումները: Այդ տողում չեն ներառվում «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաշվետու տարում պարզեցված հարկով հարկվող ժամանակաշրջանում կատարված ծախսերը:

0200Ա տող՝ «Հաստատագրված վճարների մասին» և «Բենգինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով կատարված նվազեցումները:

3. Հաշվարկի 3-րդ բաժնում («Հարկվող շահույթը (հարկային վնասը)») ցույց է տրվում հաշվետու տարում շահութահարկով հարկվող գործունեությունից ռեզիդենտի ստացված հարկվող շահույթը (համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունը) կամ հարկային վնասը (համախառն եկամտի և նվազեցումների բացասական տարբերությունը):

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0301 տող՝ շահութահարկով հարկվող գործունեությունից ստացված հարկվող շահույթը կամ հարկային վնասը (առանց ստուգման արդյունքների)՝ որպես 0100 և (0100Ա, 0119Ա) տողերի տարբերության ու 0200 և (0200Ա, 0243Ա) տողերի տարբերության հանրագումար:

0302 տող՝ ստուգման արդյունքները՝ որպես 0119Ա և 0243Ա տողերի հանրագումար:

0300 տող՝ շահութահարկով հարկվող գործունեությունից ստացված հարկվող շահույթը կամ հարկային վնասը (ներառյալ՝ ստուգման արդյունքները)՝ որպես 0301 և 0302 տողերի հանրագումար: Ընդ որում, որպես հաշվետու տարվա հարկային վնաս հաջորդ տարի փոխանցվում է 0300 տողում նշված բացասական գումարը:

4. Հաշվարկի 4-րդ բաժնում («Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները») և 0400 տողում ցույց են տրվում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան հարկվող օբյեկտի (հարկվող շահույթի) նվազեցման արտոնության գումարները: Այս բաժինը լրացվում է նաև օրենքով սահմանված շահութահարկի ազատման արտոնությունների դեպքում:

5. Հաշվարկի 5-րդ բաժնում («Հարկվող շահույթը՝ հաշվի առած հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները») և 0500 տողում ցույց են տրվում հաշվետու տարվա հարկվող շահույթը (հաշվի առած օրենքով սահմանված հարկվող օբյեկտի (հարկվող շահույթի) նվազեցման արտոնությունները)՝ որպես 0300 և 0400 տողերի հանրագումար, կամ հարկային վնասը՝ 0300 տողում նշված գումարի չափով:

6. Հաշվարկի 6-րդ բաժնում («Հաշվետու տարվա շահութահարկի գումարը») ցույց են տրվում հաշվետու տարվա հաշվարկված շահութահարկի գումարը (տող0600)՝ որպես 0500 տողի և 20%-ի արտադրյալ, ինչպես նաև հաշվետու տարում ստուգմամբ հայտնաբերված լրացուցիչ շահութահարկի գումարները (տող0600Ա):

7. Հաշվարկի 7-րդ բաժնում («Շահութահարկի վճարման հետաձգման արտոնություններ») ցույց են տրվում շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունների (այդ թվում՝ Օրենքի 40-րդ և 40¹-րդ հոդվածներով սահմանված) գումարները:

Համապատասխան տողերում լրացվում են.

0701 տող՝ նախորդ տարիներում հետաձգված շահութահարկի գումարները, որոնց մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ չեն ստացվել:

0702 տող՝ հաշվետու տարում շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվելու դեպքում՝ հետաձգված շահութահարկի գումարները, որոնց մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա ավարտին դեռևս չեն ստացվել:

0703 տող՝ հաշվետու տարում ստացված գումարներին համապատասխան շահութահարկի գումարները, որոնք վերաբերվում են նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարներին:

0700 տող՝ հաշվետու տարվա շահութահարկի գումարը (հաշվի առած շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը)՝ որպես 0600, 0702 և 0703 տողերի հանրագումար:

0700Ա տող՝ հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը, որոնց մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա ավարտին դեռևս չեն ստացվել՝ որպես 0701, 0702 և 0703 տողերի հանրագումար:

8. Հաշվարկի 8-րդ բաժնում («Օտարերկրյա պետություններում վճարված շահութահարկի գումար») ցույց են տրվում օտարերկրյա պետություններում ստացված եկամտից վճարված (գանձված) հարկի գումարների նվազեցվող մասը՝ Օրենքի 52-րդ հոդվածին համապատասխան, որոնք նվազեցվում են մինչև շահութահարկի նվազեցման արտոնությունների կիրառումը և Օրենքի 52¹-րդ հոդվածով նախատեսված նվազեցումները կազմող շահութահարկի գումարից (այսինքն՝ 0700 տողի գումարից):

Համապատասխան տողերում լրացվում են.

0801 տող՝ նախորդ հաշվետու տարիներում օտարերկրյա պետություններում վճարված (գանձված) շահութահարկի գումարների հաշվանցվող մասը, որը չի նվազեցվել նախորդ տարիների շահութահարկի գումարներից և ենթակա է նվազեցման հաշվետու կամ հաջորդ տարիների շահութահարկի գումարներից:

0802 տող՝ հաշվետու տարում օտարերկրյա պետություններում վճարված (գանձված) շահութահարկի գումարների հաշվանցվող մասը, որը ենթակա է հաշվանցման հաշվետու կամ հետագա տարիների շահութահարկի գումարներից:

0800 տող՝ օտարերկրյա պետություններում հաշվետու և նախորդ տարիներում վճարված (գանձված) շահութահարկի գումարների հաշվանցվող մասը, որը ենթակա է հաշվանցման հաշվետու տարվա շահութահարկի գումարից:

0800Ա տող՝ օտարերկրյա պետություններում հաշվետու և նախորդ տարիներում վճարված (գանձված) շահութահարկի գումարների այն մասը, որը ենթակա է հաշվանցման հաջորդ տարիների շահութահարկի գումարներից՝ որպես 0801 և 0802 տողերի հանրագումարի ու 0800 տողի գումարի տարբերություն:

9. Հաշվարկի 9-րդ բաժնում («Ձեռք սակագնով (անվճար) ծառայություններից չստացված եկամուտ») ցույց են տրվում առանձին խմբերի քաղաքացիներին օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում՝ ՀՀ կառավարության սահմանած զեղչ սակագներով կամ անվճար մատուցված ծառայությունների հետևանքով չստացված եկամուտների գումարները՝ Օրենքի 52¹-րդ հոդվածին համապատասխան, որոնք նվազեցվում են մինչև շահութահարկի նվազեցման արտոնությունների կիրառումը կազմող շահութահարկի գումարից (այսինքն՝ 0700 և 0800 տողերի հանրագումարից):

Համապատասխան տողերում լրացվում են.

0901 տող՝ նախորդ տարիներում այդ ծառայությունների մատուցման հետևանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը չի նվազեցվել նախորդ տարիների շահութահարկի գումարներից և ենթակա է հաշվանցման հաշվետու կամ հաջորդ տարիների շահութահարկի գումարներից:

0902 տող՝ հաշվետու տարում այդ ծառայությունների մատուցման հետևանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը ենթակա է նվազեցման հաշվետու կամ հաջորդ տարիների շահութահարկի գումարներից:

0900 տող՝ հաշվետու և նախորդ տարիներում այդ ծառայությունների մատուցման հետևանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը ենթակա է նվազեցման հաշվետու տարվա շահութահարկի գումարից:

0900Ա տող՝ հաշվետու և նախորդ տարիներում այդ ծառայությունների մատուցման հետևանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը ենթակա է նվազեցման հաջորդ տարիների շահութահարկի գումարներից՝ որպես 0901 և 0902 տողերի հանրագումարի ու 0900 տողի գումարի տարբերություն:

10. Հաշվարկի 10-րդ բաժնում («Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց հետո») և 1000 տողում ցույց է տրվում շահութահարկի գումարը՝ հարկվող շահույթի նվազեցման և շահութահարկի վճարման ժամկետի արտոնությունները կիրառելուց, ինչպես նաև օտարերկրյա պետություններում վճարված հարկի և զեղչ սակագներով (անվճար) մատուցված ծառայությունների հետևանքով չստացված եկամուտների գումարների նվազեցումները կատարելուց հետո՝ որպես 0700, 0800 և 0900^գ տողերի հանրագումար:

11. ՀՀ վարկի 11-րդ բաժնում («Շահութահարկի նվազեցման արտոնությունները») ցույց են տրվում շահութահարկի նվազեցման արտոնությունների գումարները (այդ թվում՝ Օրենքի 36-րդ, 39-րդ և 39¹-րդ հոդվածներով սահմանված, որոնք նվազեցվում են մինչև Օրենքի 52¹-րդ հոդվածով նախատեսված նվազեցումները կազմող շահութահարկի գումարից (այսինքն՝ 0700 տողի գումարից)

Համապատասխան տողերում լրացվում են.

1101 **տող**՝ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված ռեզիդենտ կազմակերպությունների կողմից՝ Օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան:

1102 **տող**՝ օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտ կազմակերպությունների կողմից՝ Օրենքի 39-րդ հոդվածին համապատասխան:

1103 **տող**՝ ՀՀ մաքսային օրենսդրության համաձայն ազատ տնտեսական գոտու կազմակերպչի կողմից՝ Օրենքի 39¹-ին հոդվածի 1-ին մասին համապատասխան:

1104 **տող**՝ ՀՀ մաքսային օրենսդրության համաձայն ազատ տնտեսական գոտու շահագործողների կողմից՝ Օրենքի 39¹-ին հոդվածի 2-րդ մասին համապատասխան:

1105 **տող**՝ օրենքով սահմանված շահութահարկի նվազեցման այլ արտոնությունները:

1100 **տող**՝ հաշվետու տարում շահութահարկի նվազեցման արտոնությունների ընդհանուր գումարը՝ որպես 1101-ից 1105 տողերի հանրագումար:

12. ՀՀ վարկի 12-րդ բաժնում («Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց և արտոնությունները կիրառելուց հետո») և 1200 տողում ցույց է տրվում շահութահարկի գումարը՝ արտոնությունները (այդ թվում՝ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները) կիրառելուց, ինչպես նաև օտարերկրյա պետություններում վճարված հարկի և զեղչ սակագներով (անվճար) մատուցված ծառայությունների հետևանքով չստացված եկամուտների գումարների նվազեցումները կատարելուց հետո՝ որպես 1000 և 1100 տողերի հանրագումար ($էթե [տող1000]+[տող1100]<0, ապա [տող1200]=0$):

13. ՀՀ վարկի 13-րդ բաժնում («ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը») ցույց է տրվում ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը՝ հաշվի առած Օրենքի 47¹-րդ հոդվածին համապատասխան հաշվարկված նվազագույն շահութահարկի տարեկան գումարը (որպես նվազագույն շահութահարկի ամսական գումարների հանրագումար):

Համապատասխան տողերում լրացվում են.

1301 **տող**՝ շահութահարկի գումարը՝ արտոնությունները (այդ թվում՝ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները) կիրառելուց հետո (այսինքն՝ 0700 և 1000 տողերի հանրագումար), որը համեմատվում է հաշվետու տարվա հաշվարկված նվազագույն շահութահարկի տարեկան գումարի հետ (հաշվետու տարում շահութահարկից ազատված կամ 100%-ով արտոնությունից օգտվող ռեզիդենտները այս տողը չեն լրացնում):

1302 **տող**՝ հաշվետու տարում հաշվարկված նվազագույն շահութահարկի գումարը՝ որպես նվազագույն շահութահարկի ամսական գումարների հանրագումար:

1303 **տող**՝ հաշվետու համար լրացուցիչ վճարման ենթակա նվազագույն շահութահարկի գումարը (լրացվում է, եթե 1302 և 1301 տողերի տարբերությունը դրական է):

1300 **տող**՝ հաշվետու տարվա համար վճարման ենթակա շահութահարկի գումարը՝ որպես 1200 և 1303 տողերի հանրագումար (եթե 1302 և 1301 տողերի տարբերությունը բացասական է, ապա այդ տարբերությունը առաջնահերթ հաշվանցվում է նախորդ տարիներին վճարված և շահութահարկի գումարներից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարներից):

14. ՀՀ վարկի 14-րդ բաժնում («Նվազագույն շահութահարկի վճարումները») ցույց են տրվում վճարված և շահութահարկի գումարներից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները՝ Օրենքի 47¹-րդ հոդվածին համապատասխան:

Համապատասխան տողերում լրացվում են.

1401 **տող**՝ նախորդ տարիներում վճարված և շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները:

1402 **տող**՝ հաշվետու տարում վճարված և շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները:

1400 **տող**՝ հաջորդ տարիներ փոխանցվող՝ վճարված և չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները՝ որպես 1401 և 1402 տողերի հանրագումար:

15. ՀՀ վարկի 15-րդ բաժնում («Հաջորդ տարվա շահութահարկի կանխավճարների ամսական գումարը») ցույց են տրվում հաշվետու տարվանը հաջորդող տարվա համար հաշվարկված շահութահարկի կանխավճարների ամսական գումարները՝ Օրենքի 47-րդ հոդվածին համապատասխան: *Ընդ որում, հաշվետու տարվանը հաջորդող տարում շահութահարկի նվազեցման արտոնությունից օգտվող ռեզիդենտները կանխավճարի մեծությունը*

պակասեցնում են այդ (հաշվետուի տարվանը հաջորդող) տարվա շահութահարկի նվազեցման չափով (տոկոսով)՝ արտոնությունից օգտվելու ժամանակաշրջանում:

Համապատասխան տողերում լրացվում են.

1501 տող՝ շահութահարկի գումարը՝ օրենքով սահմանված արտոնությունները (բացառությամբ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները) կիրառելուց, ինչպես նաև օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարների նվազեցումները կատարելուց հետո՝ որպես 0700 և 0800 տողերի հանրագումար¹⁾:

1502 տող՝ հաշվետու տարվա հաշվարկված պարզեցված հարկի գումարների (այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված և հաշվետու տարվանը վերաբերող պարզեցված հարկի գումարների) մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարը:

1503 տող՝ հաշվետու տարվա հաշվարկված հաստատագրված վճարի գումարների (այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված և հաշվետու տարվանը վերաբերող հաստատագրված ցճարի գումարների) մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարը:

1504 տող՝ հաշվետու տարվանը հաջորդող տարվա շահութահարկի ամսական կանխավճարներին վերաբերող շահութահարկի նվազեցման արտոնության գումարը:

1500 տող՝ հաջորդ տարվա շահութահարկի կանխավճարների ամսական գումարը՝ որպես 1501, 1502 և 1503 տողերի հանրագումարի 1/16-ի և 1504 տողի հանրագումար:

16. Հաշվարկի Աղյուսակ 1-ում նշվում են հաշվետու տարում հաշվարկված նվազագույն շահութահարկի ամսական գումարները և դրանց հանրագումարը՝ նվազագույն շահութահարկի տարեկան գումարը:

17. Ռեզիդենտները (բացառությամբ՝ բանկերի և վարկային կազմակերպությունների) աղյուսակ 2-ում նշում են Օրենքի 3-րդ հոդվածին, 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ժե» և «ժզ» ենթակետերին, 18-րդ հոդվածին համապատասխան՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններով պայմանավորված, հարկման նպատակով անհրաժեշտ հետևյալ տեղեկությունները.

ա) նախորդ և հաշվետու տարիներում դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ստեղծման մասին (համապատասխանաբար՝ 1-ին տող 3-րդ սյունյակ և 1-ին տող 4-րդ սյունյակ).

բ) սահմանված կարգով ստեղծված դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի)՝ նախորդ և հաշվետու տարիների դեկտեմբերի 31-ի ավարտին մեծության մասին (համապատասխանաբար՝ 2-րդ տող 3-րդ սյունյակ և 2-րդ տող 4-րդ սյունյակ).

գ) սահմանված կարգով դուրս գրված անհուսալի դեբիտորական այն պարտքերի գումարների մասին, որոնք մինչև կետանցված դառնալու օրվան հաջորդող 3 տարի լրանալը նախորդ և հաշվետու տարիների ավարտին չեն մարվել կամ դադարել այլ հիմքով (համապատասխանաբար՝ 3-րդ տող 3-րդ սյունյակ և 3-րդ տող 4-րդ սյունյակ).

դ) սահմանված կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական այն պարտքերի գումարների մասին, որոնք մինչև կետանցված դառնալու օրվան հաջորդող 3 տարի լրանալը նախորդ և հաշվետու տարիների ավարտին չեն մարվել կամ դադարել այլ հիմքով (համապատասխանաբար՝ 4-րդ տող 3-րդ սյունյակ և 4-րդ տող 4-րդ սյունյակ):

18. Ռեզիդենտները աղյուսակ 3-ում նշում են Օրենքի 3-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններով պայմանավորված, հարկման նպատակով անհրաժեշտ՝ նախորդ և հաշվետու տարիներում հիմնական միջոցների համար, իրենց կողմից ընտրված ամորտիզացիոն ժամկետները (ամիսների թվով արտահայտված)՝ ըստ հիմնական միջոցների կամ դրանց խմբերի (համապատասխանաբար՝ 3-րդ և 4-րդ սյունյակներ): Եթե աղյուսակում տողերի քանակը չի բավարարում, ապա այն շարունակվում է հաշվարկին կից ներկայացված լրացուցիչ թերթերում՝ պահպանելով աղյուսակի կառուցվածքը:

19. Ռեզիդենտները աղյուսակ 4-ում նշում են Օրենքի 3-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններով պայմանավորված, հարկման նպատակով անհրաժեշտ՝ նախորդ և հաշվետու տարիներում ոչ նյութական ակտիվների համար իրենց կողմից ընտրված ամորտիզացիոն ժամկետները (ամիսների թվով արտահայտված)՝ ըստ ոչ նյութական ակտիվների կամ դրանց խմբերի¹⁾ (համապատասխանաբար՝ 3-րդ և 4-րդ սյունյակներ): Եթե աղյուսակում տողերի քանակը չի բավարարում, ապա այն շարունակվում է հաշվարկին կից ներկայացված լրացուցիչ թերթերում՝ պահպանելով աղյուսակի կառուցվածքը:

20. Ռեզիդենտները աղյուսակ 5-ում նշում են հաշվետու տարում համախառն եկամտից նվազեցվող հետևյալ ծախսերը.

ա) «ա» բաժնում նշվում են Օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված այն ծախսերը, որոնց համար սահմանված են չափեր (աղյուսակում նշվում են համապատասխան չափերը (գումարային արտահայտությամբ)¹⁾ և ռեզիդենտի կողմից կատարված համապատասխան ժամանակաշրջանի ծախսերը՝ անկախ սահմանված չափերի գերազանցման հանգամանքից)՝

- վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար վճարները,
- ՀՀ տարածքից դուրս կադրերի պատրաստման համար կատարված ծախսերը,
- ՀՀ տարածքից դուրս կադրերի վերապատրաստման համար կատարված ծախսերը,

- ներկայացուցչական ծախսերը,
- ՀՀ տարածքից դուրս գովազդի համար կատարված ծախսերը,
- ՀՀ տարածքից դուրս մարքեթինգի ծախսերը,
- ՀՀ տարածքից դուրս գործուղման ծախսերը,
- ՀՀ տարածքում օրապահիկի ծախսերը,
- դաշտային բավարարման ծախսերը,
- հատուկ սննդի համար կատարված ծախսերը,
- արտահագուստի և այլ հանդերձանքի համար կատարված ծախսերը,
- առողջապահական հիմնարկների, ծերերի և հաշմանդամների տների, մանկական նախադժրոցական հիմնարկների, վերականգնողական ճամբարների, մշակութային, կրթական և մարզական հիմնարկների, ինչպես նաև բնակարանային ֆոնդի օբյեկտների պահպանման համար կատարված ծախսերը,
- աշխատակիցներին օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատույունների համար կատարված ծախսերը,
- վարկերի և փոխառությունների տոկոսները.

բ) «բ» բաժնում նշվում են ծախսերը՝ ըստ Օրենքի 10-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներով թվարկվածների՝

- աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները,
- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները,
- հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները,
- ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները,
- ապահովագրական վճարները,
- չփոխհատույվող (չհաշվանցվող) գույքահարկը,
- չփոխհատույվող (չհաշվանցվող) հողի հարկը,
- չփոխհատույվող (չհաշվանցվող) ավելացված արժեքի հարկը,
- չփոխհատույվող (չհաշվանցվող) պետական տուրքերը,
- չփոխհատույվող (չհաշվանցվող) տեղական տուրքերը և վճարները,
- չփոխհատույվող (չհաշվանցվող) այլ պարտադիր վճարները,
- ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսները
- գործառնական վարձակալության դիմաց վարձավճարները,
- այլ անձանց պատճառած վնասի հատույունը,
- տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները,
- հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերը,
- աշխատողների հավաքագրման ծախսերը.

գ) «գ» բաժնում նշվում են գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերը՝ ըստ Օրենքի 15-րդ հոդվածի:

21. Ռեզիդենտները աղյուսակ 6-ում նշում են Օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններով պայմանավորված, ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները և հարկային բազաները: Ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները (3-րդ սյունյակ) համապատասխանում են հաշվապահական հաշվետվություններում արտացոլված հաշվեկշռային արժեքներին, իսկ հարկային բազաները (4-րդ սյունյակ):

ա) մշակող ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) համար՝ սկզբնական (ձեռքբերման) արժեքի և շահութահարկով հարկման նպատակով հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերությանը (հաշվի առած օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները):

բ) այլ ակտիվների և պարտավորությունների համար՝ սկզբնական (ձեռքբերման) արժեքին (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում՝ վերագնահատման արժեքին):

**Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից
 ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված
 շահութահարկի**

Փաստաթղթի հերթական համարը
 N _____
 (լրացվում է հարկային մարմնի կողմից)
(200__ թ. __ եռամսյակ)

Ամփոփ հաշվարկ

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) [1]							
Կազմակերպության անվանումը [2]							
Անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը [3]							
Գտնվելու (բնակության) վայրը [4]							
Հեռախոս [5]							
Հաշվարկի ներկայացման ամսաթիվը [6]							

- [1] **տողում** նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն
- [2] **տողում** նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպատիրավական տեսակը
- [3] **տողում** նշվում է անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը
- [4] **տողում** նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) իրավաբանական (բնակության) հասցեն
- [5] **տողում** նշվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) աշխատանքային (տան) հեռախոսահամարը
- [6] **տողում** նշվում է հարկային մարմին հաշվարկի ներկայացման ամսաթիվը

Ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների տեսակը	Վճարված եկամուտների գումարը՝ ըստ ամիսների [7]	Պահված հարկի գումարը՝ ըստ ամիսների [8]			
Ապահովագրական հատուցումներ [9]					
Վերապահովագրական վճարներ [10]					
Փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտներ [11]					
Շահաբաժիններ [12]					
Տոկոսներ [13]					
Ռոյալթիներ [14]					
Գույքի վարձակալության դիմաց եկամուտներ [15]					
Գույքի արժեքի հավելած [16]					
Արտաքին տնտեսական գործիչ եկամուտներ [17]			x	x	x
Այլ եկամուտներ [18]					
Ընդամենը [19]					

- [7] **սյունակում** նշվում է փաստացի վճարված եկամուտների հաշվարկային մեծությունը
- [8] **սյունակում** նշվում է [7] **սյունակում** նշված եկամուտներից պահված (զանձված) շահութահարկի գումարը
- [17] **տողում** նշվում են արտաքին տնտեսական գործունեությունից ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտները
- [18] **տողում** նշվում են ոչ ռեզիդենտին վճարված՝ [9]-[17] **տողերում** չնշված այլ եկամուտներ
- [19] **տողում** նշվում է [9]-[18] **տողերի** հանրագումարը

Մնացորդը ամսվա սկզբին [20]			
Պահված հարկի գումարը [21]			
Բյուջե վճարված հարկի գումարը [22]			
Մնացորդը ամսվա վերջում [23]			

- [20] **տողում** նշվում է հաշվետու եռամսյակի յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ փաստացի վճարված եկամուտներից պահված, սակայն բյուջե չփոխանցված շահութահարկի գումարը, կամ բյուջե ավել վճարված շահութահարկի գումարը
- [21] **տողում** նշվում է եռամսյակի ընթացքում փաստացի վճարված եկամուտներից հաշվարկված շահութահարկի գումարը՝ ըստ ամիսների ([19] տողի [8] սյունակ)
- [22] **տողում** նշվում է եռամսյակի ընթացքում բյուջե վճարված շահութահարկի գումարը՝ ըստ ամիսների

- [23] տողում նշվում է հաշվետու եռամսյակի յուրաքանչյուր ամսվան հաջորդող առաջին ամսվա 1-ի դրությամբ փաստացի վճարված եկամուտներից պահված, սակայն բյուջե փոխանցված ահուֆահարկի գումարը, կամ բյուջե ավել վճարված շահութահարկի գումարը (տող[20]+տող[21]–տող[22])

Եթե [20] կամ [23] տողերում թվերը բացասական են (այսինքն՝ բյուջե փոխանցված շահութահարկի գումարը գերազանցում են փաստացի վճարված եկամուտներից պահված շահութահարկի գումարին), ապա դրանք սույն են տրվում փակագծերի մեջ

Կ.Տ.

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Գլխ. հաշվապահ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Ամփոփ հաշվարկը լրացվում է 2 օրինակից, որը ներկայացվում է հարկային մարմին: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է կազմակերպությանը (անհատ ձեռնարկատիրոջը):

Շ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Պ Ի Ր ոչ ռեզիդենտների տարեկան եկամուտների մասին		Փաստաթղթի համարը <i>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</i>									
1. Հայաստանյան աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի լրիվ անվանումը		2. Ոչ ռեզիդենտի գրանցման (ինկորպորացիայի) երկիրը									
3. Ոչ ռեզիդենտի հասցեն գրանցման (ինկորպորացիայի) երկրում		4. Ոչ ռեզիդենտի ստորաբաժանման հասցեն Հայաստանի Հանրապետությունում									
5. ՀՎՀՀ <table border="1" style="width: 100%; height: 20px;"> <tr> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> </tr> </table>										6. Հեռախոսի համարը	
7. Հաշվետու տարի <table border="1" style="width: 100%; height: 20px;"> <tr> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> </tr> </table>										8. Ներկայացման ամսաթիվը	

(հազ. դրամ)

Ցուցանիշները	Տողը	Գումարը
1. Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները		
1.1. Ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները		
ա) ապրանքների իրացումից ստացված եկամուտները	0101	
բ) արտադրանքի իրացումից ստացված եկամուտները	0102	
գ) ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները	0103	
դ) միջնորդական գործունեությունից ստացված եկամուտները	0104	
ե) կառավարման, ֆինանսական և ապահովագրական ծառայություններից ստացված եկամուտները, որոնք ներառվում են ստորաբաժանման ծախսերում	0105	
զ) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան նախորդող 3 տարիներում պակաս (ավել) ցույց տրված եկամուտները (նվազեցումները)	0106	
- այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված	0106Ա	
է) ՀՀ տարածքում ամբողջությամբ կամ մասնակիորեն արտադրված կամ (վերա)մշակված ապրանքներից (արտադրանքից) ստացված եկամուտները	0107	
ը) ստորաբաժանման միջոցով ստացված այլ եկամուտները	0108	
Ընդամենը ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները (0101-ից 0108 տողերի (բացառությամբ՝ 0106Ա տողի) հանրագումարը)	0110	
1.2. Ոչ ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները		
ա) պասիվ եկամուտները		
- շահաբաժինները	0111	
- տոկոսները	0112	
- ռոյալթիները	0113	
- Հայաստանում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտները (վարձավճարները)	0114	
- Հայաստանում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելածը	0115	
- այլ պասիվ եկամուտները	0116	
Ընդամենը պասիվ եկամուտները (0111-ից 0116 տողերի հանրագումարը)	0120	

բ) այլ եկամուտները		
- կառավարման ծառայությունների դիմաց ստացված եկամուտները	0121	
- ոչ ռեզիդենտի գլխավոր գրասենյակի կողմից իր ստորաբաժանման օգտին տրամադրված ծառայությունների դիմաց ստացված եկամուտները	0122	
- բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտները	0123	
- ապահովագրական հատույունները	0124	
- ապահովագրության հետևանքով ստացված ապահովագրական վճարները	0125	
- վերաապահովագրական վճարները	0126	
- միջնորդության պայմաններով ապրանքները օտարերկրյա պետություններից ներկրելու և Հայաստանում իրացնելու դիմաց ստացված եկամուտները	0127	
- հայաստանյան աղբյուրներից ստացված այլ եկամուտները	0128	
Ընդամենը այլ եկամուտները (0121-ից 0128 տողերի հանրագումարը)	0130	
գ) արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները		
Ընդամենը արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները	0140	
Ընդամենը հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները՝ եկամուտների հանրագումարը (տող0110+տող0120+տող0130+տող0140)	0100	
- այդ թվում՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով	0100Ա	
2. Համախառն եկամտից նվազեցումները		
2.1. Ստորաբաժանման միջոցով կատարված ծախսերը		
ա) իրացված ապրանքների ձեռքբերման հետ անմիջականորեն կապված ծախսերը	0201	()
բ) իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերը	0202	()
գ) իրացված ծառայությունների (այդ թվում՝ միջնորդական գործունեության) հետ անմիջականորեն կապված ծախսերը	0203	()
դ) այլ ուղղակի ծախսեր	0204	()
Ընդամենը ստորաբաժանման միջոցով կատարված ուղղակի ծախսերը (0201-ից 0204 տողերի հանրագումարը)	0205	()
ա) գործունեության հետ կապված վարչական ծախսերը	0206	()
բ) ապրանքների, սեփական արտադրանքի և այլ ակտիվների, ծառայությունների իրացման հետ կապված ծախսերը	0207	()
գ) ոչ արտադրական այլ ծախսերը	0208	()
դ) ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը	0209	()
Ընդամենը ստորաբաժանման միջոցով կատարված ժամանակաշրջանի ծախսերը (0206-ից 0209 տողերի հանրագումարը)	0210	()
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ստորաբաժանման ծախսերը (տող0205+տող0210)	0220	()
2.2. Ստորաբաժանման միջոցով կրած կորուստները		
ա) պատահական կորուստները	0221	()
բ) բնական կորուստները	0222	()
գ) փաստացի այլ կորուստները	0223	()
դ) բնական կամ փաստացի այլ կորուստների չափերը գերազանցող կորուստները («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 2-րդ մաս)	0224	()
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ստորաբաժանման կորուստները (0221-ից 0224 տողերի հանրագումարը)	0225	()

2.3. Ստորաբաժանման այլ նվազեցումները		
ա) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան նախորդող 3 տարիներում ավել (պակաս) ցույց տրված եկամուտը (նվազեցումը)	0226	()
- այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված	0226Ա	()
բ) բարեգործական հատկացումները («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված, «ա» կետ)	0227	()
գ) վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը	0228	()
դ) այլ նվազեցումները	0229	()
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ստորաբաժանման այլ նվազեցումները (0226-ից 0229 տողերի հանրագումարը)	0230	()
Ընդամենը համախառն եկամտից ստորաբաժանման նվազեցումները (տող0220+տող0225+տող0230)	0240	()
2.4. Ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար՝		
ա) կատարված ծախսերը (բաշխված ծախսեր)	0241	()
բ) կրած կորուստները (բաշխված կորուստներ)	0242	()
Ընդամենը ոչ ռեզիդենտի կողմից ստորաբաժանման նպատակների համար բաշխված ծախսերը և կորուստները (տող0241+տող0242)	0245	()
Ընդամենը ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից նվազեցումները (տող0240+տող0245)	0200	()
- այդ թվում՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով	0200Ա	()
3. Հարկվող շահույթը (հարկային վնասը)		
ա) առանց ստուգման արդյունքների ((տող0100-տող0100Ա-տող0106Ա)+(տող0200-տող0200Ա-տող0226Ա))	0301	
բ) ստուգման արդյունքները (տող0106Ա+տող0226Ա)	0302	
գ) ներառյալ ստուգման արդյունքները (տող0301+տող0302)	0300	
4. Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները		
ա) արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները	0401	()
բ) հարկվող շահույթի նվազեցման այլ արտոնությունները	0402	()
Ընդամենը հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները (տող0401+տող0402)	0400	()
5. Հարկվող շահույթը՝ հաշվի առած հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները (տող0300+տող0400)	0500	

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ՍՈՒՅՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԲՈԼՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ՃՇԳՐԻՏ ԵՆ

Կ.Տ. _____

(ստորագրություն)

« ___ » _____ 200__ թ.

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

Կ.Տ. _____

(ստորագրություն)

« ___ » _____ 200__ թ.

ԼՐԱՅՎՈՒՄ Է ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԿՈՂ	ԳՈՒՄԱՐ
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐ	0610	
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱՄԲՈՂՁՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԱԶԱՏՈՒՄ)	0620	
ՀԱՇՎԱՐԿՎԱԾ Է ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ ՀԱՇՎԵՏՈՒՏԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ	0630	
ՍՏՈՒԳՄԱՄԲ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐ	0640	
ՀԱՇՎԵՏՈՒՏ ԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՎՃԱՐՎԱԾ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ	0650	
ՀԱՇՎԵՏՈՒՏ ԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԱՂԲՅՈՒՐԻ ՄՈՏ ՊԱՀՎՈՂ (ԳԱՆՁՎՈՂ) ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐ	0660	
ՀԱՇՎԵՏՈՒՏ ԱՐՎԱ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՆԹԱԿԱ Է ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎՃԱՐՄԱՆ, ԵԹԵ (ՏՈՂ0610–ՏՈՂ0620-ՏՈՂ0640-(ՏՈՂ0630-ՏՈՂ0650)-ՏՈՂ0660)»0	0600Ա	
ՀԱՇՎԵՏՈՒՏ ԱՐՎԱ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՆԹԱԿԱ Է ՊԱԿԱՍԵՑՄԱՆ ԿԱՄ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՉՄԱՆ, ԵԹԵ (ՏՈՂ0610–ՏՈՂ0620-ՏՈՂ0640-(ՏՈՂ0630-ՏՈՂ0650)-ՏՈՂ0660)«0	0600Բ	

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Տարեկան եկամուտների մասին հայտարարագրի լրացման (հաշվարկում թվային տվյալները լրացվում են հազար դրամներով, իսկ հաշվարկին մասնակցող հանվող գումարները (բացասական մեծությունները) ցույց են տրվում փակագծերի մեջ)

Տարեկան եկամուտների մասին հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) նշվում են.

- «Փաստաթղթի համարը» մասում՝ հարկային մարմնում հարկ վճարողի (ոչ ռեզիդենտ կազմակերպության) առկա անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը,
- «Հայաստանյան աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի լրիվ անվանումը» մասում՝ հայաստանյան աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի լրիվ անվանումը,
- «Ոչ ռեզիդենտի գրանցման (ինկորպորացիայի) երկիրը» մասում՝ այն պետությունը, որի օրենսդրությամբ ոչ ռեզիդենտը ստեղծվել է, գրանցվել է (ինկորպորացվել),
- «Ոչ ռեզիդենտի հասցեն գրանցման (ինկորպորացիայի) երկրում» մասում՝ ոչ ռեզիդենտի հասցեն գրանցման (ինկորպորացիայի) երկրում,
- «Ոչ ռեզիդենտի ստորաբաժանման հասցեն Հայաստանի Հանրապետությունում» մասում՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման հասցեն Հայաստանի Հանրապետությունում,
- «ՀՎՀՀ» մասում՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման հարկ վճարողի հաշվառման համարը,
- «Հեռախոսի համարը» մասում՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման ղեկավարի կամ ոչ ռեզիդենտի լիազորված անձի հեռախոսի համարը,
- «Հաշվետու տարի» մասում՝ այն տարին, որի համար լրացվում է Հայտարարությունը,
- «Ներկայացման ամսաթիվը» մասում՝ ոչ ռեզիդենտի կողմից հարկային մարմին Հայտարարագիր ներկայացնելու ամսաթիվը:

Հայտարարագրի վերջին էջի համապատասխան մասը ստորագրվում է ոչ ռեզիդենտի ստորաբաժանման ղեկավարի (կամ ոչ ռեզիդենտի լիազորված անձի) կողմից և կնքվում է ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կնիքով:

1. Հայտարարագրի 1-ին՝ բաժնում («Հայաստանյան աղբյուրների ստացված եկամուտներ») ցույց են տրվում հաշվետու ժամանակաշրջանում հայաստանյան աղբյուրների ոչ ռեզիդենտի ստացված եկամուտները՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ, 24-րդ, 42-րդ, 43-րդ և 53-րդ հոդվածներին համապատասխան: Այս բաժնում չեն ներառվում Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն եկամուտ չհամարվող տարրերը:

1.1. Հայտարարագրի 1.1 ենթաբաժնում («Ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտներ») ցույց են տրվում հայաստանյան աղբյուրների անմիջականորեն ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից ստացված եկամուտները:

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0101 տող՝ ապրանքների իրացումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):

0102 տող՝ արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):

0103 տող՝ ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):

0104 տող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված միջնորդական գործունեությունից ստացված եկամուտները (իրացումից հասույթը):

0105 տող՝ կառավարման, ֆինանսական և ապահովագրական ծառայություններից ստացված եկամուտները, որոնք ներառվում են ստորաբաժանման ծախսերում:

0106 տող՝ հաշվետու տարում հայտնաբերված (այդ թվում՝ ստուգմամբ)՝ դրան նախորդող 3 տարիներում պակաս ցույց տված եկամուտները կամ ավել ցույց տված նվազեցումները:

0106Ա տող՝ ստուգմամբ հայտնաբերված՝ հաշվետու տարվանը նախորդող 3 տարիներում պակաս ցույց տված եկամուտները կամ ավել ցույց տված նվազեցումները (անկախ այդ եկամուտների և նվազեցումների տեսակից կամ հաշվապահական հաշվառմանը համապատասխան դրանց որպես եկամուտ կամ ծախս ճանաչումից):

0107 տող՝ ՀՀ տարածքում ամբողջությամբ կամ մասնակիորեն արտադրված կամ (վերա)մշակված ապրանքներից (արտադրանքից) ստացված եկամուտները:

0108 տող՝ ստորաբաժանման միջոցով ստացված այլ եկամուտները:

0110 տող՝ ստորաբաժանման միջոցով հայաստանյան աղբյուրներից ստացված բոլոր եկամուտները՝ որպես 0101-ից 0108 տողերի (բացառությամբ՝ 0106Ա տողի) հանրագումար:

1.2. Հայտարարագրի 1.2 ենթաբաժնում («Ոչ ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտներ») ցույց են տրվում հայաստանյան աղբյուրների անմիջականորեն ոչ ռեզիդենտի կողմից ստացված եկամուտները (պասիվ եկամուտներ, այլ եկամուտներ, արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտներ):

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0111 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված շահաբաժինները:

0112 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված տոկոսները:

0113 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված ռոյալթիները:

0114 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված վարձավճարները:

0115 տող՝ Հայաստանում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ոչ ստորաբաժանման միջոցով ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելանք:

0116 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված այլ պասիվ եկամուտները:

0120 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով ստացված բոլոր պասիվ եկամուտները՝ որպես 0111-ից 0116 տողերի հանրագումար:

0121 տող՝ կառավարման ծառայությունների դիմաց ոչ ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները:

0122 տող՝ ոչ ռեզիդենտի գլխավոր գրասենյակի կողմից իր ստորաբաժանման օգտին տրամադրված ծառայությունների դիմաց ստացված եկամուտները:

0123 տող՝ բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց ոչ ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները:

0124 տող՝ ապահովագրական հատուցումները:

0125 տող՝ ապահովագրության հետևանքով ստացված ապահովագրական վճարները:

0126 տող՝ վերաապահովագրական վճարները:

0127 տող՝ միջնորդության պայմաններով ապրանքները օտարերկրյա պետություններից ներկրելու և Հայաստանում իրացնելու դիմաց ոչ ստորաբաժանման միջոցով ստացված եկամուտները:

0128 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով հայաստանյան աղբյուրներից ստացված այլ եկամուտները:

0130 տող՝ ոչ ստորաբաժանման միջոցով հայաստանյան աղբյուրներից ստացված այլ եկամուտների ընդհանուր գումարը՝ որպես 0121-ից 0128 տողերի հանրագումար:

0140 տող՝ ոչ ռեզիդենտի արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտները:

0100 տող՝ հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստացած բոլոր եկամուտները՝ որպես 0110, 0120, 0130 և 0140 տողերի հանրագումար: Այդ տողում ներառվում են «Հաստատագրված վճարների մասին» և «Բենգի-

նի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հաշվետու տարում ստացվող եկամուտները: Այդ տողում չեն ներառվում «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պարզեցված հարկով հարկվող գործունեության տեսակների մասով հաշվետու տարում ստացվող եկամուտները:

0100Ա տող՝ «Հաստատագրված վճարների մասին» և «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները:

2. Հայտարարագրի 2-րդ բաժնում («Համախառն եկամտից նվազեցումները») ցույց են տրվում հաշվետու տարում ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացած եկամուտներից կատարված՝ Օրենքի 9-րդ և 56-րդ հոդվածներում թվարկված նվազեցումները (ծախսեր (այդ թվում՝ բաշխված ծախսեր), կորուստներ (այդ թվում՝ բաշխված կորուստներ), այլ նվազեցումներ):

2.1. Հայտարարագրի 2.1 ենթաբաժնում («Ստորաբաժանման միջոցով կատարված ծախսերը») ցույց են տրվում հաշվետու տարում ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից անմիջականորեն կատարված՝ հայաստանյան աղբյուրներից ստորաբաժանման միջոցով անմիջականորեն ստացված եկամուտներից նվազեցվող ծախսերը՝ Օրենքի 10-րդ, 12-17-րդ, 19-րդ, 32-րդ, 42-րդ և 56-րդ հոդվածներին համապատասխան: Այս ենթաբաժնում չեն ներառվում Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ծախս չհամարվող տարրերը և 16-րդ հոդվածի համաձայն համախառն եկամտից նվազեցվող ծախսերը:

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0201 տող՝ իրացված ապրանքների ձեռքբերման հետ անմիջականորեն կապված ծախսերը (ապրանքների իրացման համապատասխան):

0202 տող՝ իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերը (արտադրանքի իրացման համապատասխան):

0203 տող՝ մատուցված ծառայություններից, միջնորդական գործունեությունից ստացված եկամուտների հետ անմիջականորեն կապված ծախսերը (ծառայությունների, հանձնարարության, կոմիսիայի և գործակալության իրացման համապատասխան):

0204 տող՝ այլ ուղղակի ծախսեր:

0205 տող՝ իրացված ապրանքների, արտադրանքի և այլ ակտիվների, մատուցված ծառայությունների, միջնորդական գործունեության հետ անմիջականորեն կապված ծախսերը (ուղղակի ծախսերը)՝ որպես 0201-ից 0204 տողերի հանրագումար:

0206 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման գործունեության հետ կապված վարչական ծախսերը:

0207 տող՝ ապրանքների, արտադրանքի և այլ ակտիվների, ծառայությունների, միջնորդության իրացման հետ կապված ոչ ռեզիդենտի ստորաբաժանման ծախսերը:

0208 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից կատարված ոչ արտադրական այլ ծախսերը:

0209 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը:

0210 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից կատարված վարչական, իրացման և ոչ արտադրական այլ ծախսերը, ինչպես նաև ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերի (ժամանակաշրջանի ծախսերը)՝ որպես 0206-ից 0209 տողերի հանրագումար:

0220 տող՝ ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից կատարված ուղղակի և ժամանակաշրջանի ծախսերը՝ որպես 0205 և 0210 տողերի հանրագումար:

2.2. Հայտարարագրի 2.2 ենթաբաժնում («Ստորաբաժանման միջոցով կրած կորուստները») ցույց են տրվում հաշվետու տարում հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից ստացված եկամուտներից նվազեցվող (փաստաթղթերով հիմնավորված) փաստացի կորուստները՝ Օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներին համապատասխան:

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0221 տող՝ գույքի պատահական կորուստները:

5. Գտնվելու վայրը				6. Աշխատանքային հեռախոսի համարը			
				Տան հեռախոսի համարը			
7. Եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ոչ մի գործարք կամ ձեռքբերում չի կատարվել վանդակում նշել «X», ստորագրել ստորև և ներակայացնել հաշվարկը				⇒ ⇒ ⇒ ⇒ ⇒			

(հազար դրամ)

ԱԱՀ-ի կրեդիտ	Ա. Ծրջանառություն	Բ. ԱԱՀ կրեդիտ
8. ԱԱՀ-ից ազատված (հարկման օբյեկտ չհամարվող) գործարքների		
9. ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափով հարկվող գործարքներ		
10.1. Հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից		
10.2. Պարզեցված հարկով հարկվող գործունեությունից		
11. ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկվող գործարքների		
12. ԱԱՀ-ի 16.67% հաշվարկային դրույքաչափով հաշվարկվող		
13. ԱԱՀ-ի գծով այլ հարկային պարտավորություն		
13.1. Կրեդիտի ընդհանուր գումարից հետաձգվող		
14. Ընդամենը ԱԱՀ-ի կրեդիտ $U = ([8U] + [9U] + [10.1U] + [10.2U] + [11U] + [12U] - [12Բ])$ $Բ = ([11Բ] + [12Բ] + [13Բ] - [13.1Բ])$		

ԱԱՀ-ի դեբետ	Ա. Արժեք	Բ. ԱԱՀ դեբետ
15. ՀՀ տարածք ներմուծված ապրանքների		
16. ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների		
16.1. Գեբետի ընդհանուր գումարից հետաձգված		
16.2 Հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարի ճշգրտման ընդհանուր գումարը, այդ թվում՝ (նշել ճշգրտման հիմքը, պատճառը)	Ա. Ավելացում	Բ. Պակասեցում
17. Ընդամենը ԱԱՀ-ի դեբետ ($[15Բ] + [16Բ] - [16.1.Բ] + 16.2.Ա] - [16.2.Բ]$) (եթե արդյունքը դրական է լրացնել «Ա» վանդակը, եթե արդյունքը բացասական է, լրացնել «Բ» վանդակը)	Ա. դրական	Բ. բացասական
18. Գեբետի ընդհանուր գումարից ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին վերաբերվող (տողը հաշվարկի չի մասնակցում)		

19. Տվյալ ժամանակաշրջանի համար հաշվարկված ԱԱՀ - եթե լրացված է [17Ա] վանդակը՝ ապա ([14.Բ] – [17Ա]), - եթե լրացված է [17Բ] վանդակը՝ ապա ([14. Բ] + [17Բ]): Եթե 19 տողի արդյունքը դրական է՝ լրացվում է «Ա» վանդակը, եթե 19 տողի արդյունքը բացասական է՝ լրացվում է «Բ» վանդակը)	Ա. Ենթակա է բյուջե վճարման (կրեդիտ)	Բ. Ենթակա է հաշվանցյման (դեբետ)
---	---	---------------------------------------

Հարկ վճարողի / տնօրենի ստորագրությունը

Ամսաթիվ

Կնիք

Հաշվապահի ստորագրությունը

Ավելացված արժեքի հարկի հաշվարկի լրացման կարգը

- լրացվում է հազար դրամներով՝ ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ,
- հաշվետու ժամանակաշրջանի (այսուհետ՝ հիմնական) կամ ճշգրտման (նախորդող) ժամանակաշրջանի համար (այսուհետ՝ ճշգրտված) հաշվարկ ներկայացնելիս համապատասխան վանդակում կատարվում է նշում,
- ԱԱՀ-ի հաշվարկի վերևի աջ վանդակը լրացվում է ՀՀ հարկային մարմնի կողմից,
- հաշվարկի մթնեցված վանդակները չեն լրացվում:

- [1]. Նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) կազմված ութանիշ թվից,
- [1A]. Նշվում է ԱԱՀ վճարողի հաշվառման համարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից այդպիսի կարգ սահմանած լինելու դեպքում: Մինչև նշված կարգի սահմանումը [1A] կետը չի լրացվում:
- [2]. Նշվում է այն հաշվետու ժամանակաշրջանը, որի համար կազմվում է ԱԱՀ-ի հիմնական կամ ճշգրտված հաշվարկը: Եթե տվյալ հարկ վճարողի համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում ամիսը, ապա լրացվում են միայն տարվա և ամսվա համար նախատեսված վանդակները: Եռամսյակային կտրվածքով ԱԱՀ-ի հաշվարկ ներկայացնող անձինք ամսվա համար նախատեսված վանդակները չեն լրացնում
- [3]. Նշվում է ԱԱՀ վճարող Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անուն, ազգանունը:
- [4]. Լրացվում է իրավաբանական անձի լրիվ անվանումը:
- [5]. Լրացվում է ԱԱՀ վճարող իրավաբանական անձի գտնվելու վայրի կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրի հասցեն:
- [6]. Նշվում է իրավաբանական անձի աշխատանքային կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) տան հեռախոսի համարը:
- [7]. Եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ԱԱՀ վճարող համարվող անձի կողմից ոչ մի գործարք (գործառնություն՝ այդ թվում ԱԱՀ-ով հարկված ձեռքբերում) չի իրականացվել կամ իրականացված գործարքները վերաբերվում են բացառապես հաստատագրված վճարով և (կամ) պարզեցված հարկով հարկվող գործունեությանը՝ լրացվում է հաշվարկի [1]-ից մինչև [6]-րդ տողերը (ներառյալ)՝ [7]-րդ վանդակում նշվում է «X» և այն ներկայացվում է:
- [8]. Լրացվում է «ԱԱՀ-ի մասին» հետևյալ գործարքների գծով իրացման շրջանառության ընդհանուր մեծությունը.
- ՀՀ օրենքի 7 հոդվածով սահմանված հարկման օբյեկտ չհամարվող (բացառությամբ 3-րդ կետում նշված) գործարքների,
 - օրենքի 15 հոդվածի համաձայն հարկից ազատված գործարքների,
 - այն գործարքների գծով շրջանառությունը, որոնց վրա չի տարածվում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի գործողությունը,
 - ԱԱՀ-ով չհարկվող շրջանառելի (բազմակի օգտագործման) տարալի իրացման շրջանառության գումարը,
- Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք նշում են նաև օրենքի 3 հոդվածով սահմանված չհարկվող շենք (3մլն. դրամը):
- [9]. Լրացվում է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածով սահմանված գործարքների (գործառնությունների) իրացման շրջանառությունը:
- 10.1 տողում լրացվում է հաստատագրված վճարներով հարկվող գործունեությունից հասույթը (շրջանառությունը), իսկ 10.2. տողում՝ պարզեցված հարկով հարկվող գործունեությունից հասույթը (իրացման շրջանառությունը):
- [11]. [11Ա] վանդակում լրացվում է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-3 կետերով (անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի համար՝ 6 հոդվածի 1-2 կետերով) սահմանված՝ ԱԱՀ-ի 20 % դրույքաչափով հարկվող գործարքների (ներառյալ՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 24¹ հոդվածով սահմանված գործարքների) շրջանառությունը (արժեքը)՝ առանց ԱԱՀ-ի, [11Բ]-ում՝ այդ շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (ներառյալ հետաձգված պարտավորության գումարները):
- [12]. [12Ա] վանդակում լրացվում է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-3 կետերով (անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի համար՝ 6 հոդվածի 1-2 կետերով) սահմանված գործարքների (ներառյալ՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 24¹ հոդվածով սահմանված գործարքների) շրջանառությունը, որոնց համար կիրառվել է լրիվ արժեքով հատուցում, [12Բ]-ում՝ լրացվում է ԱԱՀ-ի գումարը (ներառյալ հետաձգված

պարտավորության գումարները՝ հաշվարկված լրիվ արժեքով հատույման գումարի նկատմամբ 16.67% հաշվարկային դրույքաչափով:

[13]. Լրացվում է ԱԱՀ-ի գծով այլ հարկային պարտավորության ընդհանուր գումարը, այդ թվում՝

- ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորության այն գումարները, որոնց բյուջե վճարման պարտավորությունը օրենքի 24¹ հոդվածի համաձայն ծագել է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում,
- մինչև 2002թ. հունվարի 1-ը իրականացված գործարքների գծով ԱԱՀ- հետաձգված հարկային պարտավորության գումարները, որոնց բյուջե վճարման պարտավորությունը ծագել է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում,
- [11] և [12] տողերում նշված գործարքների հետ չկապված պարտավորությունների գումարները (մասնավորապես՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածի 4 կետով սահմանված կարգով առաջացած պարտավորության գումարը),
- օրենքի 19 հոդվածի պահանջները խախտելու արդյունքում դուրս գրված հարկային հաշիվներում և ԱԱՀ վճարող չհամարվող անձանց կողմից հարկային հաշիվներ դուրս գրելու դեպքում՝ հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները:

[13.1] վանդակում լրացվում է ԱԱՀ-ի այն գումարը, որի գծով հարկի վճարման պահը հետաձգվում է (ծագում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 24¹ հոդվածի համապատասխան՝ ըստ վճարման):

[14Ա] վանդակում լրացվում է [8Ա], [9Ա], [10.1Ա], [10.2Ա], [11Ա] և [12Ա] վանդակներում նշված թվերի հանրագումարի և [12Բ] վանդակում նշված թվի տարբերությունը, իսկ [14Բ] վանդակում լրացվում է [11Բ], [12Բ], [13Բ] վանդակներում նշված թվերի հանրագումարի և [13.1Բ] վանդակում նշված թվի տարբերությունը:

[15]. Համապատասխանաբար [Ա] վանդակում լրացվում է ապրանքների ներմուծման ընդհանուր ծավալը (այդ թվում՝ ներմուծված այն ապրանքների, որոնց համար ներմուծման պահին ԱԱՀ չի գանձվում)՝ մաքսային արժեքով, [Բ] վանդակում՝ ՀՀ մաքսային մարմինների կողմից ներմուծման պահին գանձված ԱԱՀ-ի գումարը:

[16]. Համապատասխանաբար [Ա] վանդակում լրացվում է ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների (այդ թվում՝ ԱԱՀ-ով չհարկված) ընդհանուր արժեքը, անկախ այն հանգամանքից դրանց դիմաց մատակարարներին վճարում կատարվել է, թե ոչ, [Բ] վանդակում՝ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների համար մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված հարկի ընդհանուր գումարը:

[16.1] Լրացվում է ստացված ծառայությունների և ձեռք բերված (ներմուծված) ապրանքների դիմաց մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում (օրենքի 24¹ հոդվածի դեպքում՝ նաև ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարի այն մեծությունը (մասը), որի գծով հաշվանցում կատարելու իրավունքի ձեռքբերման պահը, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23 և 24¹ հոդվածների, հետաձգվում է մինչև նշված հոդվածներում նշված ձեռքբերումների դիմաց վճարման պահը:

[16.2]. Լրացվում են, օրենքի համաձայն կատարվող վերահաշվարկների արդյունքում հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարների ավելացումը կամ պակասեցումը՝ ըստ վերահաշվարկ կատարելու հիմքերի (հոդվածների): Սույն հաշվարկի առումով որպես այդպիսիք ընդունվում են, մասնավորապես՝

- ԱԱՀ-ով չհարկվող (հարկման օբյեկտ չհամարվող), ԱԱՀ-ից ազատված գործարքներին, ինչպես նաև օրենքի գործողության ոլորտում չընդգրկվող գործարքներին ուղղակիորեն վերաբերվող ձեռքբերումների գծով ԱԱՀ-ի գումարները, որոնք ենթակա չեն հաշվանցման և պետք է միացվեն ձեռքբերման արժեքին կամ արտադրության ու շրջանառության ծախսերին,
- տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցվող ԱԱՀ-ի այն գումարները, որոնց գծով հաշվանցման իրավունքը օրենքի 23 և 24¹ հոդվածների համաձայն հետաձգվել էր նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում,
- օրենքի 26 հոդվածի 4-րդ կետի համաձայն հաշվանցման պակասեցման ենթակա ԱԱՀ-ի գումարների նվազեցումը,
- օրենքի 27 հոդվածի համաձայն կատարվող հաշվարկների արդյունքում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների նվազեցումը:

[17]. լրացվում է դեբետագրման արդյունքը, ընդ որում՝ եթե $([15Բ] + [16Բ] - [16.1Բ] + [16.2.Ա] - [16.2.Բ])$ մեծ է 0-ից, ապա լրացվում է [17Ա] վանդակը, իսկ եթե $([15Բ] + [16Բ] - [16.1.Բ] + [16.2.Ա] - [16.2.Բ])$ փոքր է 0-ից, ապա լրացվում է [17Բ] վանդակը:

[18] Լրացվում է ստացված ծառայությունների և ձեռք բերված (ներմուծված) ապրանքների դիմաց մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում (ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարը, որը վերաբերվում է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին: Հաշվարկին չմասնակցող օժանդակ (ոչ պարտադիր) տեղեկություն է և լրացվում է հարկ վճարողի ցանկությամբ, եթե հարկ վճարողը նպատակ ունի այդ գումարները ուղղել այլ հարկային պարտավորությունների մարմանը կամ ետ ստանալ:

[19]. Լրացվում է տվյալ ժամանակաշրջանում բյուջեի հետ հաշվարկների արդյունքը: Ընդ որում,

ա) եթե [17] տողում թիվը լրացվել է «Ա. դրական» վանդակում և

- $([14. Բ] - [17 Ա])$ -ի արդյունքը դրական է, ապա լրացվում է [19Ա] վանդակը,
- $([14. Բ] - [17 Ա])$ -ի արդյունքը բացասական է ապա լրացվում է [19Բ] վանդակը,

բ) եթե [17] տողում թիվը լրացվել է «Բ. բացասական» վանդակում, ապա $([14. Բ] + [17Բ])$ -ի արդյունքը լրացվում է [19Ա] վանդակում:

ՏԵՂԵԿԱՆՔ

գյուղատնտեսական արտադրանք արտադրողի կողմից մշակվող գյուղատնտեսական հողատեսքերի և կենդանաբուծական գործունեության վերաբերյալ

199 թվականի համար

Տրվում է _____

ձեռնարկության անվանումը, ֆիզիկական անձի անուն, ազգանունը

առ այն, որ նա _____

բնակավայրի, այգեգործական ընկերության անվանումը

սեփականության իրավունքով, վարձակալական հիմունքներով, մշտական

անհրաժեշտ ընդգծել

օգտագործման իրավունքով մշակում է _____

հեկտար հողատարածք հետևյալ հողատեսքերով՝

այդ թվում

1. վարելահող _____ հեկտար _____

նշել կուլտուրաների խումբը և մշակվող տարածքը

2. այգի _____ հեկտար _____

նշել կուլտուրայի անվանումը և մշակվող տարածքը

3. խոտհարք _____

զբաղվում է կենդանաբուծությամբ և ունի _____

նշել կեղանու տեսակը և գլխաքանակները (մեղվաբուծության դեպքում՝ փեթակների թիվը,

ձկնաբուծության, շերամապահության դեպքում՝ չի լրացվում)՝ տեղեկանք տալու օրվա դրությամբ

Ընտանիքի կազմը _____

ձեռնարկության համար լրացվում է իրացումը (վաճառքը)
իրականացնելու համար լիազորված անձանց անուն,
ազգանունը և անձնագրային տվյալները

Տեղական ինքնակառավարման
մարմնի ղեկավար (գյուղապետ, թաղապետ)
կամ այգեգործական ընկերության նախագահ

Կ.Տ.

(ստորագրություն)

Լիազորագիր

ՀՀ _____ մարզ, գյուղ _____ 200 թ.

Մենք ներքոստորագրյալներս, հանդիսանալով _____ գյուղական
(անվանումը)
համայնքի անդամներ, լիազորում ենք _____ ին
(անուն ազգանուն)

(անձնագրի N _____ տրված _____ թ. _____ կողմից,
բնակության վայրը _____)

մեր անունից և մեր հաշվին նշված քանակով ստանալու հետևյալ թունաքիմիկատները, պարարտանյութերը, գյուղատնտեսական մշակաբույսերը, բազմամյա տնկարկի սերմնա-
յուղի, տնկանյութի և տնկանյութը (անհրաժեշտն
ընդգծել) և վճարել դրա դիմաց:

N	Անունը, ազգանունը	Անձնագրի համարը	Գյուղատնտե- սական արտադրանքի արտադրության հողատարածքի չափը	Թունաքիմիկատի, պարարտանյու- թի, գյուղատնտեսական մշակաբույ- սի, բազմամյա տնկարկի սերմնա- յուղի, տնկանյութի			Գումարը	Ստորա- գրությունը
				չափի միավորը	անվա- նումը	քանակը		

Լիազորագիրն ուժի մեջ է մինչև _____ 20__ թ.

Լիազորված անձ՝ _____
(ստորագրությունը)

Գյուղապետ _____
(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Կ. Տ.

Օտարված ապրանքներին բաժին ընկնող՝ հաշվանցման (վերադարձման) ենթակա ակցիզային հարկի գումարը, որի դիմաց վճարվել է	Ա. ՀՀ տարածքում	Բ. Արտասահմանված
11. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումար		
12. Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերված հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումար		
13. Ընդամենը հաշվետու ամսում վճարված ակցիզային հարկի գումար, [11]+[12]		
14. Հաշվարկված ակցիզային հարկի գումարի նկատմամբ ձեռք բերված հումքի դիմաց վճարված գումարի գերազանցող՝ չհաշվանցվող (չվերադարձվող) մասը, [13Ա] – [9], եթե [13Ա] > [9]		
15. Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների արդյունքով հաշվանցման (վերադարձման) ենթակա հարկի գումար		
16. Ընդամենը հաշվետու ամսում հաշվարկված հարկի գումարից նվազեցման (հաշվանցման) ենթակա ակցիզային հարկի գումար ([13Ա] + [13Բ] – [14Ա] + [15Ա] + [15Բ])		

	Ա. բյուջեից վերադարձման	Բ. բյուջե վճարման
17. Հաշվետու ամսվա արդյունքով ենթակա է (լրացվում է «Ա» վանդակը՝ եթե ([16] – [9]) > 0 և լրացվում է «Բ» վանդակը՝ եթե ([9] – [16]) > 0		

Հարկ վճարողի / տնօրենի ստորագրություն

Ամսաթիվ

Կնիք

Հաշվապահի ստորագրություն

Ակցիզային հարկի հաշվարկի լրացման կարգ

Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հաշվարկ ներկայացնելու կամ նախկինում ներկայացրած հաշվարկի ճշգրտման դեպքում հաշվարկի վերևի ձախ մասում՝ համապատասխան վանդակում նշվում է «X» :

Ակցիզային հարկի հաշվարկի վերևի աջ վանդակը լրացվում է ՀՀ հարկային մարմնի կողմից:

- [1]. Նշվում է Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)՝ կազմված ութանիշ թվից:
- [2]. Նշվում է այն հաշվետու (կամ ճշգրտման) ժամանակաշրջանը, որի համար կազմվել է ակցիզային հարկի հաշվարկը:
- [3]. Նշվում է ակցիզային հարկ վճարող ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անուն, ազգանունը:
- [4]. Լրացվում է իրավաբանական անձի անվանումը:
- [5]. Լրացվում է ակցիզային հարկ վճարող իրավաբանական անձի գտնվելու վայրը, ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրը:
- [6]. Նշվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) աշխատանքային կամ տան հեռավորության համարը:
- [7]. Եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ակցիզային հարկ վճարող համարվող անձի կողմից ոչ մի գործարք (գործառնություն) չի կատարվել, լրացվում է հաշվարկի [1]-ից մինչև [6]-րդ տողը ներառյալ, [7]-րդ վանդակում նշվում է «X», հաշվարկը ստորագրվում և ներկայացվում է:
- [8]. Լրացվում է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ծածկագրերը և անվանումները, ըստ «Արտաքին տնտեսական գործունեություն ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի: Ընդ որում, ծածկագրի նիշերի թիվը պետք է համապատասխանի «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների վերաբերյալ՝ հրահանգի 1 հավելվածում բերված քանակին: Նշվում են նաև հրահանգի 1 հավելվածով նախատեսված

չափման բնափրային միավորները, «2204» և «2208» ապրանքախմբերի ապրանքների համար՝ դրանց բացթողման գինը (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումարների)՝ վերածած մեկ լիտրի, ակցիզային հարկի դրույթաչափը (օրենքով սահմանված կամ օրենքին համապատասխան հաշվարկված) և ակցիզային հարկի գումարը: «2207» ապրանքախմբին դասվող ապրանքների համար նշվում է նաև սպիրտայնության աստիճանը :

[9]. Լրացվում է [8]-րդ տողի «Գ» վանդակում նշված թվերի հանրագումարը:

[10]. Լրացվում է «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6 հոդվածի «ա» և «բ» կետերին համապատասխան ակցիզային հարկով չհարկվող ապրանքների իրացման շրջանառությունը՝ հազար դրամներով:

[11]. Լրացվում է հաշվետու ամսում արտադրող- իրացնողների կողմից հումքի ներմուծման ժամանակ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից գանձված ակցիզային հարկի գումարի այն մասը, որը հաշվապահական հաշվառման ընտրված քաղաքականությանը համապատասխան՝ ակցիզային հարկով հարկվող ապրանքների իրացմանը համամասնորեն ենթակա է հաշվանցման: Ընդ որում «Ա» վանդակում լրացվում է հաշվանցման ենթակա ակցիզային հարկի այն գումարը, որը բաժին է ընկնում Հայաստանի Հանրապետության տարածքում իրացված՝ ակցիզային հարկով հարկված ապրանքներին, իսկ «Բ» վանդակում՝ ակցիզային հարկի այն գումարը, որը բաժին է ընկնում արտահանված և իրացված ապրանքներին:

[12]. Լրացվում է հաշվետու ամսում արտադրող-իրացնողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում որպես հումք ձեռք բերված ապրանքների համար մատակարարների հաշվարկային փաստաթղթերում առանձնացված և վճարված ակցիզային հարկի գումարի այն մասը, որը հաշվապահական հաշվառման ընտրված քաղաքականությանը համապատասխան՝ ակցիզային հարկով հարկվող ապրանքների իրացմանը համամասնորեն ենթակա է հաշվանցման: Ընդ որում, «Ա» վանդակում լրացվում է հաշվանցման ենթակա ակցիզային հարկի այն գումարը, որը բաժին է ընկնում Հայաստանի Հանրապետության տարածքում իրացված՝ ակցիզային հարկով հարկված ապրանքներին, իսկ «Բ» վանդակում՝ ակցիզային հարկի այն գումարը, որը բաժին է ընկնում արտահանված և իրացված ապրանքներին:

[13]. «Ա» վանդակում լրացվում է «11Ա» և «12Ա» վանդակների հանրագումարը, իսկ «Բ» վանդակում՝ «11Բ» և «12Բ» վանդակների հանրագումարը :

[14]. «Ա» վանդակում լրացվում է հումքի համար վճարված այն ակցիզային հարկի գումարը, որը գերազանցում է այդ ամսվա համար հաշվարկված հարկի գումարին և որն «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն ենթակա չէ հաշվանցման կամ վերադարձման ([13Ա]–[9]):

[15]. «Ա» վանդակում լրացվում է նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում Հայաստանի Հանրապետության տարածքում իրացված արտադրանքին բաժին ընկնող՝ ձեռք բերված հումքի գծով մատակարարների հաշվարկային փաստաթղթերում առանձնացված ակցիզային հարկի այն գումարը, որի դիմաց վճարումը կատարվել է հաշվետու ամսում:

«Բ» վանդակում լրացվում է նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում արտահանված և իրացված արտադրանքին բաժին ընկնող՝ ձեռք բերված հումքի գծով մատակարարների հաշվարկային փաստաթղթերում առանձնացված ակցիզային հարկի այն գումարը, որի դիմաց վճարումը կատարվել է հաշվետու ամսում:

[16]. Լրացվում է [13] տողի «Ա» և «Բ» ու [15] տողի «Ա» և «Բ» վանդակներում լրացված թվերի ընդհանուր գումարի և [14] տողի «Ա» վանդակում նշված թվի տարբերությունը:

[17]. «Ա» վանդակը լրացվում է, եթե ([16]–[9]) դրական թիվ է: «Ա» վանդակում լրացվում է ամսվա արդյունքներով հաշվանցման (բյուջեից վերադարձման) ենթակա ակցիզային հարկի գումարը:

«Բ» վանդակը լրացվում է, եթե ([9]–[16]) դրական թիվ է: «Բ» վանդակում լրացվում է ամսվա արդյունքներով բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարը:

Դիմում արտահանված՝ ակցիզային հարկով հարկված ապրանքների դիմաց վճարված ակցիզային հարկի գումարների վերադարձման	Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)										
1. Հարկ վճարողի հաշվառման համարը <table border="1" style="width: 100%; height: 20px;"> <tr> <td style="width: 20px;"> </td><td style="width: 20px;"> </td><td style="width: 20px;"> </td><td style="width: 20px;"> </td><td style="width: 20px;"> </td><td style="width: 20px;"> </td><td style="width: 20px;"> </td><td style="width: 20px;"> </td><td style="width: 20px;"> </td><td style="width: 20px;"> </td> </tr> </table>											2. Հաշվետու ժամանակաշրջանը 200__ թ. _____ ամիս
3. Անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը _____	4. Իրավաբանական անձի անվանումը _____										
5. Հասցեն	6. Հեռախոսի համարը										
7 Բանկային տվյալներ	8 Պետական ռեգիստրում գրանցման համարը										

Խնդրում ենք (լրացնել համապատասխան կետում)

1 « ____ » _____ 200__ թ. դրությամբ առկա՝ ակցիզային հարկի գծով հաշվանցման (վերադարձման) ենթակա գումարից _____ (_____ գումարը թվերով և բառերով _____) հազար դրամը, հաշվանցել հետևյալ հարկատեսակների գծով հարկային պարտավորությունների հաշվին՝

հարկատեսակը	գումարը, հազ. դրամ

2. « ____ » _____ 200__ թ. դրությամբ առկա՝ ակցիզային հարկի գծով հաշվանցման (վերադարձման) ենթակա գումարից _____ (_____ գումարը թվերով և բառերով _____)

_____) հազար դրամը, այլ հարկատեսակների գծով հարկային պարտավորությունների բացակայության պայմաններում, սահմանված կարգով վերադարձնել: Կից ներկայացվում են հաշվանցումը (վերադարձը) հիմնավորող փաստաթղթերը, առդիր _____ էջ:

Կազմակերպության ղեկավար

Կ.Տ.

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

« ____ » _____ թ

1.5. Պարզեցված հարկ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ (պարզեցված հարկ վճարող համարվելու համար)	Փաստաթղթի հերթական համարը <hr/> (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Հարկ վճարողի հաշվառման համարը	
2. Անհատ ձեռնարկատերի կամ նոտարի անուն, ազգանունը	3. Առևտրային կազմակերպության անվանումը
4. Գ-տնվելու վայրը (բնակության վայրը)	5. Հեռախոսի համարը

Հանդիսանալու են պարզեցված հարկ վճարող

Սույնով հայտարարում եմ, որ.

ա) ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով նախորդ տարում մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության (առանց ԱԱՀ-ի) ընդհանուր գումարը չի գերազանցել 50,0 մլն. դրամը

բ) տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունները (այդ թվում՝ տույժերը և տուգանքները) կազմում են 100,0 հազ. դրամից պակաս գումար

գ) նախորդ տարում Հայաստանի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների (որոնց համար ԱԱՀ վճարված չի եղել ներմուծման պահին) չիրացված՝ մաքսային արժեքով հաշվարկված մնացորդը տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ չի գերազանցում 1,0 մլն. դրամը

դ) չեմ հանդիսանում ակցիզային հարկով (դրա փոխարեն՝ հաստատագրված վճարով) հարկվող ապրանքներ արտադրող

ե) չեմ հանդիսանում բանկ, գրավատուն, վարկային կամ ապահովագրական կազմակերպություն, ներդրումային հիմնադրամ, արժեթղթերի շուկայում մասնագիտացված մասնակից, արտարժույթի առքուվաճառքի, արտարժույթի դիլերային առքուվաճառքի գործունեություն իրականացնող, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակխաղերի կազմակերպիչ

զ) ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով չեմ իրականացնում իրավունքի, հաշվապահական հաշվառման և աուդիտի բնագավառի գործունեություն, առևտրային գործունեության և կառավարման հարցերով խորհրդատվություն, հանքագործական արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման, կապիտալ շինարարության իրականացման, կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման կամ ինժեներական հետազննման և փորձաքննության գործունեություն

է) չեմ հանդիսանում գյուղատնտեսական արտադրանք արտադրող

ը) չեմ հանդիսանում համատեղ գործունեության պայմանագրի կողմ

թ) կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը) չի պատկանում այլ պարզեցված հարկ վճարող առևտրային կազմակերպությանը

ժ) կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը) չի պատկանում այլ պարզեցված հարկ վճարող անհատ ձեռնարկատիրոջը

ժա) կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը) չի պատկանում այլ անձին, որին միաժամանակ պատկանում է պարզեցված հարկ վճարող այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը)

ժբ) չեմ հանդիսանում պարզեցված հարկ վճարող այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժնի (բաժնետոմսի, բաժնենասի) սեփականատեր

Տեղյակ եմ սույն հայտարարագրի մեջ տրվող ոչ ճիշտ տեղեկությունների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությանը

Հարկ վճարողի (պատասխանատու անձի) ստորագրություն	Հարկ վճարողի կնիքը	Հարկային (տարածքային) տեսչության պետ՝ Տեսուչ՝
---	--------------------	--

Հայտարարագրի ներկայացման ժամկետը « ____ » _____ 200__թ.

Հայտարարագիրը լրացվում է 2 օրինակից, որոնք ներկայացվում են հարկ վճարողի հաշվառման (գրանցման) վայրի ՀՏ: Հայտարարագիրն առձեռն հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ ՀՏ-ի կողմից գրանցելուց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին:

Հայտարարագրի լրացման կարգը

- [1] - Լրացվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)
- [2] - Լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անուն, ազգանունը
- [3] - Լրացվում է առևտրային կազմակերպության լրիվ անվանումը
- [4] - Լրացվում է հարկ վճարողի գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի համար՝ բնակության վայրը)
- [5] - Լրացվում է հարկ վճարողի աշխատանքային (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի համար՝ բնակության վայրի) հեռախոսահամարը

ՊԱՐԶԵՑՎԱՆ ԸՆԴԿԻ ԸՆԾՎԱՐԿ	Փաստաթղթի հերթական համարը <hr/> (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Հարկ վճարողի հաշվառման համարը	
2. Անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անուն, ազգանունը	3. Առևտրային կազմակերպության անվանումը
4. Գտնվելու վայրը (բնակության վայրը)	5. Հեռախոսի համարը
6. Հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջան՝ 200__թ. ____ եռամսյակ	

- [1] - Լրացվում է ՏՀ հարկային մարմինների փրամադրած հարկ վճարողի հաշվառման համարը (ՏՎՏՀ)
- [2] - Լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անուն, ազգանունը
- [3] - Լրացվում է առ'փրային կազմակերպության լրիվ անվանումը
- [4] - Լրացվում է հարկ վճարողի գտնվելու (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի համար՝ բնակության) վայրը
- [5] - Լրացվում է հարկ վճարողի աշխատանքային (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի համար՝ բնակության վայրի) հեռախոսահամարը
- [6] - Լրացվում է հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջանը (ճշգրտման դեպքում աջ սյունակում կատարվում է «X» նշագրումը)

(հազ. դրամ)

Գործունեության տեսակը	Իրացման շրջանառությունը [7]	Դրույթաչափը [8]	Հարկի գումարը [9]
10. Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն		3.5%	
11. Վարձակալություն		10%	
12. Այլ գործունեություն		5%	
13. Նոտարական գործունեություն		20%	
14. Ընդամենը		X	

- [7] **սյունակում** նշվում է հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջանում պարզեցված հարկով հարկվող գործունեության իրացման շրջանառությունը
- [8] **սյունակում**, նշվում է հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջանում պարզեցված հարկով հարկվող գործունեության յուրաքանչյուր տեսակի համար պարզեցված հարկի դրույթաչափը
- [9] **սյունակում** նշվում է հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջանում պարզեցված հարկի գումարը ([10], [11], [12] և [13] **տողերում**՝ սյունակ[9] = սյունակ[7] x սյունակ[8])
- [10], [11] - [12] **տողերում** նշվում է պարզեցված հարկ վճարողի կողմից իրականացվող՝ խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության, վարձակալության և այլ գործունեության մասով իրացման շրջանառությունը, պարզեցված հարկի դրույթաչափը և գումարը
- [13] **տողում** նշվում է նոտարների կողմից իրականացվող նոտարական գործունեության մասով իրացման շրջանառությունը, պարզեցված հարկի դրույթաչափը և գումարը
- [14] **տողում** նշվում է պարզեցված հարկով հարկվող գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը և պարզեցված հարկի գումարը (տող[10]+տող[11]+տող[12]+տող[13])

Հարկ վճարողի (պատասխանատու անձի) ստորագրություն	Հարկ վճարողի կնիքը	Հարկային (տարածքային) տեսչության պետ՝ Տեսուչ՝
---	--------------------	--

Հաշվարկի ներկայացման ժամկետը « ____ » _____ 200__թ.

Հաշվարկը լրացվում է 2 օրինակից, որոնք ներկայացվում են հարկ վճարողի հաշվառման (գրանցման) վայրի ՀՏ: Հաշվարկը առձեռն հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ ՀՏ-ի կողմից գրանցելուց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին:»:

1.6. Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարներ

Շ Ա Յ Վ Ա Ր Կ ԲԵՆԶԻՆԻ ԵՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ	Փաստաթղթի հերթական համարը N _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)								
Հաշվետու ժամանակաշրջանը	[1]	տարի					ամիս		
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	[2]								
Իրավաբանական անձի անվանումը	[3]								
Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	[4]								
Գտնվելու վայրը	[5]								
Հեռախոսահամարը	[6]								

[7] Եթե հաշվետու ամսվա ընթացքում ոչ մի գործարք չի կատարվել վանդակում նշել «X» և ներկայացնել հաշվարկը

	Քանակ (տոննա)	Ներմուծվող յուրաքանչյուր մեկ տոննայի համար հաստատագրված վճարի չափը (դրամ)	Ներմուծման համար հաշվարկված հաստատագրված վճար (հազար դրամ)
[8] ՀՀ տարածք ներմուծված բենզին			
[9] ՀՀ տարածք ներմուծված դիզելային վառելիք			

	Իրացումից հասույթը (հազար դրամ)	Իրացված քանակ (տոննա)	Հաստատագրված վճարը (հազար դրամ)		Շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճարի չափը (հազար դրամ)
			Իրացումից հասույթի նկատմամբ 1% -ի կիրառմամբ	Իրացված քանակի նկատմամբ 2500 կամ 1500 դրամի կիրառմամբ	
	1	2	3	4	5
[10] Բենզին					
[11] Դիզելային վառելիք					
[12] Հաշվետու ամսվա համար հաշվարկված շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճարի գումարը					

Տնօրեն
(անհատ ձեռնարկատեր)

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ 200 թ.

ԿԱՐԳ

ԲԵՆԶԻՆ ԵՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔ ԵՆԵՐՄՈՒԾՈՂ ԱՆՉԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՑՎԱԾ ԲԵՆԶԻՆԻ ԵՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՀԱՄԱՐ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻՆ (ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻՆ) ՓՈԽԱՐԻՆՈՂ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԼՐԱՑՄԱՆ

- լրացվում է հազար դրամներով՝ ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ,
 - քանակական ցուցանիշները լրացվում են տոննաներով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ
- [1] - Նշվում է այն հաշվետու ժամանակաշրջանը (տարին և ամիսը), որի համար ներկայացվում է հաշվարկը:
- [2] - Լրացվում է վճարող իրավաբանական անձի լրիվ անվանումը և կազմակերպական-իրավական ձևը:
- [3] - Լրացվում է վճարող անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը:
- [4] - Լրացվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) կազմված ութանիշ թվից:
- [5] - Նշվում է վճարող իրավաբանական անձի գտնվելու վայրի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրի հասցեն:
- [6] - Նշվում է վճարողի հեռախոսահամարը (հեռախոսահամարները):
- [7] - Եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վճարողի կողմից ոչ մի գործարք (գործառնություն) չի իրականացվել՝ լրացվում է հաշվարկի [1]-ից մինչև [6]-րդ տողերը՝ [7]-րդ վանդակում նշվում է «X» և այն ներկայացվում է:
- [8] - Լրացվում է հաշվետու ամսվա ընթացքում ՀՀ տարածք ներմուծված բենզինի քանակը՝ արտահայտված տոննաներով, ներմուծվող յուրաքանչյուր մեկ տոննայի համար հաստատագրված վճարի չափը (դրամ), ներմուծման համար հաշվարկված հաստատագրված վճարի գումարը (հազար դրամով):
- [9] Լրացվում է հաշվետու ամսվա ընթացքում ՀՀ տարածք ներմուծված դիզելային վառելիքի քանակը՝ արտահայտված տոննաներով, ներմուծվող յուրաքանչյուր մեկ տոննայի համար հաստատագրված վճարի չափը (դրամ), վճարված հաստատագրված վճարի գումարը (հազար դրամով):
- [10] Լրացվում է հաշվետու ամսվա համար՝
- «1» վանդակում՝ բենզինի իրացումից հասույթը (հաշվեգրման եղանակով հաշվարկված)՝ հազար դրամով
 - «2» վանդակում՝ բենզինի իրացված քանակը՝ տոննայով
 - «3» վանդակում՝ բենզինի իրացումից հասույթի նկատմամբ օրենքով սահմանված 1% դրույքաչափի կիրառմամբ հաշվարկվող հաստատագրված վճարի չափը (հազար դրամ), որը որոշվում է՝ $[10.3] = [10.1] \times 1\%$,
 - «4» վանդակում՝ բենզինի իրացված քանակի նկատմամբ օրենքով սահմանված 2500 դրամ դրույքաչափի կիրառմամբ հաշվարկվող հաստատագրված վճարի չափը (հազար դրամ), որը որոշվում է՝ $[10.4] = [10.2] \times 2500$,
 - «5» վանդակում՝ բենզինի իրացումից շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճարի գումարը: Եթե $[10.3] > [10.4]$, ապա $[10.5]$ վանդակում լրացվում է $[10.3]$ վանդակում նշված թիվը, իսկ եթե $[10.3] < [10.4]$, ապա $[10.5]$ վանդակում լրացվում է $[10.4]$ վանդակում նշված թիվը:
- [11] Լրացվում է հաշվետու ամսվա համար՝
- «1» վանդակում՝ դիզելային վառելիքի իրացումից հասույթը (հաշվեգրման եղանակով հաշվարկված)՝ հազար դրամով
 - «2» վանդակում՝ դիզելային վառելիքի իրացված քանակը՝ տոննայով
 - «3» վանդակում՝ դիզելային վառելիքի իրացումից հասույթի նկատմամբ օրենքով սահմանված 1% դրույքաչափի կիրառմամբ հաշվարկվող հաստատագրված վճարի չափը (հազար դրամ), որը որոշվում է՝ $[11.3] = [11.1] \times 1\%$,
 - «4» վանդակում՝ դիզելային վառելիքի իրացված քանակի նկատմամբ օրենքով սահմանված 1500 դրամ դրույքաչափի կիրառմամբ հաշվարկվող հաստատագրված վճարի չափը (հազար դրամ), որը որոշվում է՝ $[11.4] = [11.2] \times 1500$,
 - «5» վանդակում՝ դիզելային վառելիքի իրացումից շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճարի գումարը: Եթե $[11.3] > [11.4]$, ապա $[11.5]$ վանդակում լրացվում է $[11.3]$ վանդակում նշված թիվը, իսկ եթե $[11.3] < [11.4]$, ապա $[11.5]$ վանդակում լրացվում է $[11.4]$ վանդակում նշված թիվը:
- [12]. Լրացվում է հաշվետու ամսվա արդյունքներով՝ բենզինի և (կամ) դիզելային վառելիքի իրացումից հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճարի գումարը՝ հազար դրամով ($[12] = [10.5] + [11.5]$):

1.7. Հաստատագրված վճարներ

_____ տարածքային հարկային
տեսչության պետ՝ _____

ԴԻՄՈՒՄ - ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.Վճարողի լրիվ անվանումը _____

2.Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀՀ)

--	--	--	--	--	--	--	--	--	--

3.Գործունեության տեսակը _____

4.Գործունեության իրականացման հասցեն _____

5.Գործունեության դադարեցման սկիզբը « __ » _____ 199__ թ. ավարտը « __ » _____ 199__ թ.

6.Ընդամենը _____ օր

(նշումը կատարվում է թվով և տառերով)

Վճարողի
(պաշտոնատար անձի)
ստորագրությունը

Կ. Տ.

գրանցված է _____ տիտ կողմից
թիվ _____ « _____ » 199 թ.

Կ. Տ.

_____ « _____ » 199 թ.

1.8. Պետական սոցիալական ապահովագրության վճարներ

Գործատուների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների

Փաստաթղթի հերթական համարը

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հունիս 2006թ.

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)									
Կազմակերպության անվանումը									
Հասցեն									
Պետ. գրանցման համարը									
Պետ. գրանցման ամսաթիվը									
Գործունեության ոլորտը									
Հեռախոսի համարը									
Հաշվարկի ներկայացման ամսաթիվը									

Աղյուսակ 1

հազ. դրամ

Սոցիալական վճարների օբյեկտի (ԱՎՈՒՄ) միջակայքերը և քանակը	Հաշվարկված ԱՎՈՒՄ ըստ ամիսների [11]	Սոցիալական վճար ըստ ամիսների [12]
[13] վարձու աշխատողների մասով 13		
[13ա] 20.0 հազ. դրամից ոչ ավել 13		
[13ա-1] աշխատողների թվաքանակը 13		X
[13բ] 100.0 հազ. դրամից ոչ ավել 13		
[13բ-1] աշխատողների թվաքանակը 13		X
[13գ] 100.0 հազ դրամից ավելի 13		
[13գ-1] աշխատողների թվաքանակը 13		X
[14] Այլ աշխատողների մասով 14		
[14ա] 20.0 հազ. դրամից ոչ ավել 14		
[14ա-1] աշխատողների թվաքանակը 14		X
[14բ] 100.0 հազ. դրամից ոչ ավել 14		
[14բ-1] աշխատողների թվաքանակը 14		X
[14գ] 100.0 հազ դրամից ավելի 14		
[14գ-1] աշխատողների թվաքանակը 14		X
[15] Օտարերկրացիների մասով 15		
[15-1] աշխատողների թվաքանակը 15		X
[16] Ընդամենը 16		

Աղյուսակ 2

Առ 01.04.2003թ. հաշվարկված, սակայն չվճարված ԱՎՈՒՄ և դրա նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարներ	ԱՎՈՒՄ ըստ ամիսների [17]	Վճարված ԱՎՈՒՄ-ի սոցիալական վճար ըստ ամիսների [18]
[19] Մնացորդը ամսվա սկզբին 19		
[20] Վճարվել է տվյալ ամսում ԱՎՈՒՄ 20		
[21] Վճարված ԱՎՈՒՄ-ների քանակը 21		
[22] Մնացորդը ամսվա վերջում 22		

Աղյուսակ 3

Ապահովագրական նպաստներ	Նպաստառուներ [23]	Օրեր [24]	Վճարված գումարը [25]
[26] Հիվանդության նպաստ 26			
[27] Պրոթեզավորման նպաստ 27			
[28] Առողջարանային բուժման նպաստ 28			
[29] Հղիության և ծննդաբերության նպաստ 29			
[30] Ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ 30			
Թաղման			
[31] Ընդամենը 31			
[32] Վերականգնված միջոցներ 32			

Աղյուսակ 4

[33] Հաշվարկված սոցիալական վճարի գումար	33	
[34] Կատարված ծախսեր	34	
[35] Վճարվող սոցիալական վճարի ամսվա գումար	35	
[36] Չձևակերպված աշխատողի սոցիալական վճար	36	
[37] Չձևակերպված աշխատողի սոցիալական վճար	37	

Տնօրեն

_____ (ստորագրություն)

_____ (ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ

_____ (ստորագրություն)

_____ (անուն ազգանուն)

Կ.Տ.

Գործի համարը _____

Տուգանք _____

8.

ՌԻՍԿԻ ՎՐԱ ԴԻՄԿԱԾ ԱՏՈՒԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ, ՈՐՊԵՍՁԻ ԸԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵՆ ԻՐԵՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԸՍԿՈՂԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարկային մարմնում ստուգումները կազմակերպվում և անցկացվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի, հարկային մարմինների կողմից իրականացվող հսկողությանը վերաբերող այլ իրավական ակտերի, այդ թվում քրեական դատավարության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ինչպես նաև հարկային մարմնի պաշտոնական պարզաբանումների հիման վրա:

Անհրաժեշտ է իմանալ

Հարկային մարմնում նախքան ստուգման սկսելն իրականացվում է հարկ վճարողի հարկային գործում առկա բոլոր փաստաթղթերի վերլուծություն և տեղեկատվության ուսումնասիրում:

Հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումներն առավելապես պետք է ուղղված լինեն հարկերից խուսափելու առավել մեծ հավանականություն ունեցող գործարքներին և տնտեսության առանձին ոլորտներին: Հարկային ստուգման հիմնական նպատակն է հարկ վճարողի հարկային պարտավորությունների և նրա գործունեության հարկային օրենսդրության համապատասխանության ճշտումը:

Ստուգման ընթացքում հարկային պարտավորությունների ճիշտ հաշվարկման համար հարկային մարմինը, ի դեմս հարկային տեսուչի, պատասխանատվություն է կրում ոչ միայն հարկ վճարողի, այլ նաև ողջ պետության և հասարակության առջև:

Ի՞նչ է ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումը

Հարկային մարմինները ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումներ իրականացնելիս առաջնորդվում են նրանով, որ տնտեսությունում առկա են ոլորտներ, որտեղ գոյություն ունեն սովորաբար մեծ ռիսկերի մակարդակի ռիսկեր և հարկ վճարողներ, որոնք իրականացնում են ռիսկային գործարքներ: Հիմնականում հարկային մարմնում դա իրականացվում է վերլուծությունների և դիտարկումների հիման վրա ընտրված չափանիշների համադրման միջոցով: Օրինակ՝ ստուգման տեսանկյունից որպես ռիսկային կարող է համարվել այն հարկ վճարողը¹⁰, որը՝

- տարիներ շարունակ հարկային մարմին է ներկայացնում «գրոյական» հաշվետվություններ,
- տարիներ շարունակ աշխատում է վնասով,
- կատարել է մաքսային գործարք, սակայն դա չի արտացոլել իր հաշվետվություններում,
- հաղիսանում է պարզեցված հարկ վճարող, իրականացրել է ԱԱՀ-ից ազատված ապրանքների ներմուծում որոշ քանակությամբ և դուրս է գրել ԱԱՀ-ի հարկային հաշիվ,
- պարբերաբար կուտակում է հարկային պարտավորություններ,
- պարբերաբար ուշացնում է հարկային հաշվետվությունների, հաշվարկների ներկայացումը,
- հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների արդյունքներով պարբերաբար արձանագրվում են խախտումներ և այլն:

Հիմք ընդունելով վերը նշված և նմանատիպ այլ չափանիշներ՝ հարկային մարմնում իրականացվում է ստուգման ենթական հարկ վճարողների ընտրություն և ելնելով այս կամ այն չափանիշից՝ ըստ ռիսկայնության աստիճանի խմբավորում:

Ընդհանուր առմամբ հարկ վճարողը պետք է գիտակցի, որ որքան նա ազնիվ կլինի հարկային մարմնի հետ հարաբերություններում, այնքան կկրճատվի նրա հարկային հսկողության «թիրախ» լինելու հավանականությունը:

¹⁰ Թվարկված չափանիշները բերվել են որպես օրինակ հեղինակների կողմից:

Ինչպիսի՞ սկզբունքներով է առաջնորդվում հարկային մարմինն ստուգումներ անցկացնելիս

Հարկային ստուգումների կազմակերպման և անցկացման սկզբունքներն են՝

- օրենքի գերակայությունը,
- տնտեսավարող սուբյեկտների հավասարությունն օրենքի առջև,
- հարկային օրենսդրության միատեսակ կիրառումը,
- ստուգման նպատակին վերաբերող հարցերի համատարած ուսումնասիրումը, հայտնաբերված խախտումների լրիվ ծավալով արձանագրումը,
- արձանագրված խախտումների վերացման հետևողականությունը,
- հարկային պարտավորությունների կատարման անխուսափելիությունը:

Ինչպիսի՞ հարկային ստուգումներ են լինում

Ստուգման նպատակից ելնելով կարող են անցկացվել հետևյալ հարկային ստուգումները.

- բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում,
- պարտադիր սուբյալական ապահովագրության վճարների և վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտությանն ուղղված ստուգում,
- ձեռնարկատիրական գործունեության առարկաների (առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների) գրանցման ճշտության ստուգում,
- պարզեցված հարկ վճարողին պատկանող ապրանքային մնացորդի ճշման ստուգում,
- վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտությանն ուղղված ստուգում,
- ակցիզային դրոշմանիշների կիրառման ճշտության ստուգում,
- հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում,
- հաստատագրված վճարների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության ստուգում,
- «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և արժութային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների կատարման ճշտության ստուգում,
- առանց պետական գրանցման, առանց սահմանված ժամկետում հարկային մարմնում հաշվառման, առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա, օրենսդրությամբ թույլատրված վայրերից դուրս, օրենսդրությամբ արգելված գործունեության ստուգում,
- դրամարկղային գործառնությունների իրականացման ճշտության ստուգում,
- վերստուգում կամ կրկնակի ստուգում,
- հանդիպակալ ստուգում,
- լուծարային ստուգում:

9.

ԿԱՍԵՐԱԼ ՌԻՍԻՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ՇԵՏԿԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության համաձայն տնտեսավարող սուբյեկտների մոտ բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտությանն ուղղված ստուգումներ կարող են իրականացվել տարեկան միայն մեկ անգամ, և անհրաժեշտ է, որ ստուգումը չդառնա ինքնանպատակ և օգտագործվի տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ ստուգում իրականացնելու ընձեռնված հնարավորությունը: Դա հիմնականում վերաբերվում է այն պարտաճանաչ կազմակերպություններին, որոնք անցյալում աչքի են ընկել բյուջեի նկատմամբ իրենց պարտականությունների պատշաճ կատարմամբ, և առավելապես նրանց նկատմամբ է կիրառելի և արդարացված տնտեսավարող սուբյեկտների ընթացիկ տնտեսական գործունեությանը նվազագույն միջամտության սկզբունքը:

Կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունը՝ որպես ուսումնասիրության առանձին տեսակ, Հայաստանի հարկային օրենսդրության մեջ սկզբունքորեն նոր հասկացություն է, և պետք է գործնական կիրառություն է ստացել 2006 թվականի հուլիսի 1-ից սկսած, իսկ կամերալ ուսումնասիրության դրույթն օրենսդրորեն ամրագրվեց «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությամբ¹¹:

Կամերալ ուսումնասիրության նպատակն է պարզել հարկ վճարողների կողմից հարկերի հաշվարկման ճշտությունը, միևնույն հաշվետվության ցուցանիշների, տվյալների և թվաբանական հաշվարկների ճշտությունը, տարբեր հաշվետվություններում առկա համադրելի ցուցանիշների կամ տեղեկությունների համապատասխանությունը, հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների և տեղեկությունների համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու պետական մարմիններից ստացված տեղեկությունների հետ:

1. Ընդհանուր դրույթներ

Նշված ուսումնասիրությունն իրականացվում է հարկային մարմնի կողմից՝ հիմնվելով տնտեսավարող սուբյեկտի կողմից հարկային մարմին ներկայացրած հաշվետվությունների, հաշվարկների, հայտարարագրերի, ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությունների և օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկությունների (այսուհետ՝ հաշվետվություններ) վրա:

Ուշադրություն

Կամերալ ուսումնասիրությունն իրականացվում է հարկային մարմնի գրասենյակում՝ առանց տնտեսավարող սուբյեկտին այցելության և լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի:

Կամերալ ուսումնասիրությունների (ինչպես նաև հարկային օրենսդրությամբ սահմանված ուսումնասիրությունների մյուս տեսակների դեպքում) արդյունքներով անմիջականորեն հարկային պարտավորություններ չեն առաջանում: Այս դեպքում հարկ վճարողներն իրավունք ունեն հարկային մարմնի կողմից կատարված կամերալ ուսումնասիրության արդյունքներին (կազմված արձանագրությանը) ծանոթանալուց հետո կատարել համապատասխան շտկումներ:

Կամերալ ուսումնասիրության արդյունքում հաշվետվություններում խախտումներ, անճշտություններ, անհամապատասխանություններ (այսուհետ՝ խախտումներ) հայտնաբերելու դեպքում հարկային մարմնի կողմից դրա վերաբերյալ կազմվում է արձանագրություն՝ երկու օրինակից: Արձանագրության մեկ օրինակն ուսումնասիրություն անցկացնող հարկային մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում փոստով կամ առձեռն տրամադրում է տնտեսավարող սուբյեկտին:

¹¹ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ-28-Ն), ընդունվել է 15.12.2005թ, հրապարակվել է 25.01.2006թ. «ՀՀ ՊՏ» N5(460):

Ուշադրություն

Կամերալ ուսումնասիրության արդյունքներով կազմվող արձանագրությունը տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց փոստով առաքելու դեպքում գրագրությունն իրականացնել ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 16-ի «Հարկային և պարտադիր այլ վճարների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և հաշվետվությունները փոստի միջոցով հարկային մարմին ներկայացնելու պարզեցված ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 471-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) հինգ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված խախտումների հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի հարկային մարմին ներկայացնել օրենսդրությամբ սահմանված ճշտված (ճշգրտված) հաշվետվություն կամ հաշվետվություններ: Կամ, արձանագրված խախտումների հետ համաձայն չլինելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) հարկային մարմին է ներկայացնում իր գրավոր առարկությունները:

Կամերալ ուսումնասիրության ընթացքում լրացուցիչ հարկային պարտավորություններ կարող են առաջանալ միայն այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտի կողմից ընդունվում են հարկային մարմնի հայտնաբերած խախտումները և ներկայացվում են ճշգրտված հաշվետվություններ:

Հարկային մարմինների կողմից հայտնաբերված խախտումների հետ համաձայն չլինելու և գրավոր առարկություններ ներկայացնելու դեպքում բերված հիմնավորումները կսկսվում են հարկ վճարողի հարկային գործին և կարող են օգտագործվել (ճշտվել) միայն օրենքով նախատեսված կարգով իրականացվող ստուգումների ժամանակ:

Հարկային մարմնի կողմից հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմված և հարկ վճարողին տրամադրված (այդ թվում՝ փոստի միջոցով ուղարկված) արձանագրություններին չարձագանքելու (կամ ճշտված հաշվարկ, կամ առարկություն չներկայացնելու դեպքում) այդ խախտումները նույնպես պետք է պարզվեն միայն օրենքով նախատեսված կարգով իրականացվող ստուգումների ժամանակ: Այլ խոսքերով ասած, այս դեպքում առաջնային է հարկ վճարողի դիրքորոշումը, և, ստացված առարկությունների կամ առարկություններ չստանալու հիմքերով հարկային մարմինն իր կողմից վարվող հարկ վճարողների քարտերում ճշտումներ մտցնելու իրավասություն չունի:

Հարկային մարմնում կամերալ ուսումնասիրությունները, որպես կանոն, իրականացվելու են հիմնականում հարկային տեսչությունների հարկ վճարողների սպասարկման, տվյալների մշակման և հաշվառման բաժնի աշխատակիցների կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կամերալ ուսումնասիրությունը նոր երևույթ է ինչպես ՀՀ հարկային օրենսդրության մեջ, այնպես էլ հարկային վարչարարության և հարկային մարմինների աշխատանքային գործառնությունների առումով, ապա սկզբնական շրջանում ամենայն հավանականությամբ ուսումնասիրության կենթարկվեն համեմատաբար ոչ մեծ թվով (հիմնականում խոշոր, կամ բազմաֆունկցիոնալ) տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված հաշվետվությունները:

II. Ընթացակարգեր

Կամերալ ուսումնասիրության իրականացման ընթացքում տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկային մարմին ներկայացված հաշվետվությունների մասով խախտումների, անճշտությունների, անհամապատասխանությունների հայտնաբերման նպատակով ուսումնասիրության կարող են ենթարկվել, մասնավորապես՝

- որևէ առանձին հաշվետվության ձևաթղթում արտացոլված ցուցանիշների տողերում և վանդակներում հաշվարկված տվյալների արժանահավատությունը և թվաբանական հաշվարկների ճշտությունը,
- առանձին հաշվետվություններում արտացոլված՝ համադրելի ցուցանիշների կամ տեղեկությունների միջև տրամաբանական կապը և համապատասխանությունը,
- հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների կամ տեղեկությունների և օրենսդրությամբ սահմանված կարգով այլ պետական մարմիններից ստացված տեղեկությունների միջև անհամապատասխանությանը կամ անճշտությանը,
- հարկման բազայի հաշվարկման ճշտությունը,
- ֆինանսական հաշվետվություններում և առանձին հարկային և պարտադիր այլ վճարների օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների կամ տեղեկությունների փոխադարձ կապը:

Տնտեսավարող սուբյեկտների ընտրության տեսանկյունից (որոնց կողմից ներկայացված փաստաթղթերը կարող են դառնալ կամերալ ուսումնասիրության առարկա), որպես ընդհանուր սկզբունք, կամերալ ուսումնասիրության կարող են ենթարկվել օրինակ այն տնտեսավարողների փաստաթղթերը, որոնց կողմից որոշակի ժամանակահատվածում հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունները հիմնավոր չեն կամ դրանցում առկա են անճշտություններ և այնպիսի տվյալներ, որոնք հակասում են հարկատուի տնտեսական գործունեության միջանկյալ կամ վերջնական տնտեսական արդյունքներին: Մասնավորապես՝

- տարվա կտրվածքով վճարված հարկերի ընդհանուր թվում որևէ հարկատեսակի (օրինակ, եկամտահարկի) տեսակարար կշիռը բավականին փոքր է,
- մի քանի տարի անընդմեջ հայտարարագրվել է հարկային վնաս,
- իրականացրել է ներմուծման կամ արտահանման մաքսային գործարք, սակայն դրանից հետո որոշակի ժամանակահատվածում (ելմելով վճարման ենթակա հարկերի համար սահմանված հաշվետու շամանակաշրջաններից) հաշվետվություններ չի ներկայացրել (ներկայացվել է գրոյական հաշվետվություն) և հարկեր չի վճարել,
- ստացել է համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու թույլտվություն (լիցենզիա), սակայն դրանից հետո որոշակի ժամանակահատվածում (ելմելով վճարման ենթակա հարկերի համար սահմանված հաշվետու շամանակաշրջաններից) հաշվետվություններ չի ներկայացրել կամ հարկեր չի վճարել, կամ վճարած հարկերը չեն գերազանցել իրացման շրջանառության 1 տոկոսը:
- դադարել է համապատասխան գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, սակայն տնտեսավարող սուբյեկտը շարունակում է զբաղվել այդ գործունեությամբ և ներկայացնում է այդ գործունեությանը վերաբերվող հաշվետվություններ:

Ուշադրություն

Հարկային մարմնի կողմից կամերալ ուսումնասիրության չեն ենթարկվում ստուգված ժամանակաշրջանին վերաբերող հաշվետվությունները:

III. Առանձին հարկատեսակների և պարտադիր վճարների մասով հաշվետվությունների կամերալ ուսումնասիրություն

Ցանկացած հարկատեսակի կամ պարտադիր վճարի դեպքում մենք գործ ունենք մի շարք առանձնահատկությունների հետ՝ հարկման տարբեր ռեժիմների, հաշվառում և գրանցումներ վարելու, հաշվարկներ, հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու, դրանց ներկայացման և հարկերի վճարման ժամկետների, վճարելու և այլն: Սակայն, որպես կանոն, բոլոր հարկատեսակների և պարտադիր վճարների հաշվարկներում լրացման ենթակա տողերը և վանդակները մաթեմատիկական գործողությունների առումով միմյանց հետ փոխկապակցված են (հանրագումար, տեսակարար կշիռ, դրական կամ բացասական տարբերություն, տոկոսադրույքի կիրառում և այլն):

Ստորև համառոտակի անդրադարձ է կատարվում տարբեր հարկատեսակների և պարտադիր վճարների հաշվետվությունների կամերալ ուսումնասիրությունների անցկացման առանձնահատկություններին, որոնք կարող են ուղեկցել հանդիսանալ տնտեսավարող սուբյեկտների համար, և ինչի վրա, ցանկալի է, որ նրանք առավել մեծ ուշադրություն դարձնեն:

Շահութահարկի հաշվարկների կամերալ ուսումնասիրության ժամանակ կարող է ուսումնասիրվել կամ ուշադրության արժանանալ հետևյալը, մասնավորապես,

կարող է համադրվել ԱԱՀ-ի հաշվարկներում արտացոլված իրացման շրջանառությունը (տարեկան համադրմամբ) շահութահարկի հաշվարկի համախառն եկամտի տողերի և Չև 2-ի եկամտային մասում արտացոլված գումարների հետ,

- հաշվետու տարվա ընթացքում պարզեցված հարկից ընդհանուր հարկման կարգին անցնելիս պարզեցված հարկով հարկման ժամանակահատվածում ստացված եկամուտները և կատարված ծախսերը չեն արտացոլվում շահութահարկի հաշվարկում,
- շահութահարկի հաշվարկում (շահութահարկի գումարի նվազեցման արտոնություններ) արտացոլված գումարները պետք է համապատասխանեն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ գլխով սահմանված դրույթներին և հարկման գործում առկա լինեն արտոնությունները հաստատող փաստաթղթերը,

- Շահութահարկի հաշվարկի 1303 տողը լրացվում է միայն այն դեպքում, եթե հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված (հարկվող շահույթի նկատմամբ 20% դրույքաչափով) շահութահարկի գումարը պակաս է հաշվետու տարվա համար հաշվարկված տարեկան նվազագույն գումարի մեծությամբ: Ընդ որում՝ 1302 տողում արտացոլված գումարը պետք է համապատասխանի Աղյուսակ 1-ի «Ընդամենը» վանդակում արտացոլված գումարին:

Արտոնությունների բացակայության դեպքում նվազագույն շահութահարկի տարեկան գումարի հաշվարկման համար հիմք են ընդունվում շահութահարկի հաշվարկի 0101-0107 տողերում արտացոլված գումարները, իսկ «շեղումները» կարող են պայմանավորված լինեն, մասնավորապես՝

- մեկ ամսվա իրացումից հասույթի տարբերությունով, քանի որ հարկվող շահույթի հաշվարկման նպատակով համախառն եկամտի մեջ ներառվում են հաշվետու տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ստացված եկամուտները (այդ թվում՝ իրացումից հասույթը), իսկ նվազագույն շահութահարկի տարեկան գումարը որոշվում է նախորդ տարվա դեկտեմբերի 1-ից մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 30-ը (ներառյալ) ստացված իրացումից հասույթից (նշվածը վերաբերվում է նաև ԱԱՀ-ի հաշվարկների տարեկան իրացման շրջանառության հետ համադրելուն),
- հիմնական միջոցների վաճառքով (ներառվում է 0105 տողում), որի իրացումից հասույթը չի ներառվում նվազագույն շահութահարկի հաշվարկման բազայում՝ այդ հանգամանքը կարելի է ճշտել Ձև N5-ի Աղյուսակ 20-ի (Այլ ոչ գործառնական գործունեությունից եկամուտ և ծախս) 010 տողի 6-րդ սյունակից (Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից (օտարումներից) եկամուտ),
- հիմնական միջոցների ամորտիզացիայի գումարով՝ այդ հանգամանքը կարելի է ճշտել Ձև N5-ի Աղյուսակ 2-ից:

Եկամտահարկի գծով ներկայացվող հաշվետվությունների, հաշվարկների կամերալ ուսումնասիրություն

Եկամտահարկի հաշվարկների կամերալ ուսումնասիրության ժամանակ կարող է ուսումնասիրվել կամ ուշադրության արժանանալ հետևյալը, մասնավորապես,

- «Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, պահված եկամտահարկի հաշվարկի» կամերալ ուսումնասիրության ժամանակ հաշվետու տարվա ընթացքում հարկային գործակալ կազմակերպությունների կողմից ներկայացված եռամսյակային հաշվարկների 9-րդ տողի 7-րդ սյունակներով և 28-րդ տողի 26-րդ սյունակներով ցույց տված թվերի հանրագումարը կարող է համեմատվել ֆինանսական հաշվետվությունների Ձև N 4 «Գրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության» 070 տողով ցույց տրված գումարի հետ,
- Տվյալ հաշվետու տարվա համար եկամտահարկի եռամսյակային հաշվարկների [9], [10] տողերի 7-րդ սյունակներով և [28], [29] տողերի 26-րդ սյունակներով ցույց տրված տվյալների հանրագումարը կարող է համեմատվել տվյալ հաշվետու տարվա ամիսների համար ներկայացված «Գործատուների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների» ամսական հաշվետվության [13], [14], [15] տողերով արտացոլված տվյալների հանրագումարի հետ՝ տարբերությունը համադրելով հաշվապահական հաշվեկշռի (Ձև N 1) պասիվային մասի 430 «Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով» տողով արտացոլված տարեկազմի և տարեվերջի մնացորդների հետ,
- Եկամտահարկի եռամսյակային հաշվարկի 23-րդ և 44-րդ տողերը լրացված լինելու դեպքում կամերալ ուսումնասիրության ժամանակ կարող է ստուգվել, ներկայացվել են արդյոք տվյալ եռամսյակի համար անհատ ձեռնարկատերերին վճարված եկամուտների մասով և օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց վճարված եկամուտների և պահված եկամտահարկի մասով «Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների մասին» տեղեկություններ, և այդ տեղեկություններով արտացոլված եկամուտների և եկամտահարկի հանրագումարները համապատասխանում են արդյոք հաշվարկի 23-րդ և 44-րդ տողերի 26-րդ սյունակներում արտացոլված եկամուտների հանրագումարին և 44-րդ տողի 27-րդ սյունակներում արտացոլված եկամտահարկի հանրագումարին,
- Ֆիզիկական անձի հայտարարագրի «Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ» [30]-րդ տողում արտացոլված գումարն անհրաժեշտ է համադրել օրենսդրությամբ սահմանված դեպքերում ներկայացված «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան ներկայացված «Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ֆիզիկական անձին վճարված եկամուտների մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքին համապատասխան ներկայացված «Վարձու աշխատողների, նրանց վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների մասին» տեղեկություններով արտացոլված գումարների հետ:
- Ֆիզիկական անձի հայտարարագրի կամերալ ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է համեմատել հայտարարագրի «Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ» 40-րդ տողում արտացոլված գումարը հաշվետու տարում ԱԱՀ-ի հաշվարկներով արտացոլված իրացման ծավալների (4 եռամսյակների հանրագումարի) և պետ. բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ակտով (ԱԱՀ-ի գծով) արձանագրված հաշվետու տարում թաքցված կամ պակաս ցույց տրված իրացման շրջանառության հանրագումարի հետ:

- Ֆիզիկական անձի հայտարարագրի «Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ» 40-րդ տողում արտացոլված գումարը անհրաժեշտ է համեմատել տվյալ անձի վերաբերյալ հաշվետու տարվա ընթացքում «Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ֆիզիկական անձին վճարված եկամուտների մասին» ներկայացված տեղեկություններով արտացոլված գումարների հանրագումարի հետ:

Ավելացված արժեքի հարկի հաշվարկների և տեղեկությունների կամերալ ուսումնասիրություն

ԱԱՀ-ի հաշվարկների կամերալ ուսումնասիրության ժամանակ կարող է ուսումնասիրվել կամ ուշադրության արժանանալ հետևյալը, մասնավորապես,

- նախորդ տարվա արդյունքներով 60.0 մլն դրամ և ավելի իրացման շրջանառություն ունեցող ԱԱՀ վճարողները պետք է ներկայացնեն ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ,
- ԱԱՀ-ի հաշվարկի 20% դրույքաչափով և 16.67% հաշվարկային դրույքաչափով հարկվող գործարքների տողերում արտացոլված շրջանառությունը փոքր չլինի հաշվետու ժամանակաշրջանում դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքում ներառված հարկային հաշիվների հանրագումարից, իսկ ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների տողում արտացոլված արժեքը փոքր չլինի հաշվետու ժամանակաշրջանում մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքում ներառված հարկային հաշիվների հանրագումարից,
- ԱԱՀ-ի հաշվարկի հաստատագրված վճարով հարկվող գործունեություն տողում արտացոլված շրջանառությունը համապատասխանի հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված սահմանային չափերի համապատասխան ցուցանիշների մասին հայտարարությունում ներառված գումարներին,
- ՀՀ տարածք ներմուծված ապրանքներ տողում (15Ա) արժեքը և ԱԱՀ-ի դեբետը (15Բ) համապատասխանեն ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկություններին, իսկ ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկություններում «արտահանված» ապրանքների մաքսային արժեքը որպես կանոն համապատասխանի կամ մեծ չլինի հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկի 0-ական դրույքաչափով հարկվող գործարքներ տողում արտացոլված շրջանառության գումարից,
- հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկով արտացոլված իրացման հասույթը որպես կանոն փոքր չլինի հաշվետու ժամանակաշրջանի որոշ ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվությունում ներառված իրացումից հասույթից:

Ակցիզային հարկի հաշվարկների և հաշվետվությունների կամերալ ուսումնասիրություն

Ակցիզային հարկի հաշվարկների և հաշվետվությունների կամերալ ուսումնասիրության ժամանակ կարող է ուսումնասիրվել կամ ուշադրության արժանանալ հետևյալը, մասնավորապես,

- ակցիզային հարկի հաշվարկի 8-րդ բաժնում արտացոլված տեղեկությունները պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի թիվ 299 որոշմամբ հաստատված կարգին համապատասխան ներկայացված տեղեկություններին, իսկ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների իրացման մասով նաև ՀՀ ՊԵՆ 2002 թվականի օգոստոսի 31-ի թիվ 02/933 հրամանով հաստատված կարգի թիվ 2 հավելվածի տեսքով ներկայացվող դրոշմանիշների օգտագործման հաշվարկում արտացոլված տեղեկությունների հետ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե ակցիզային հարկի հաշվարկների և ֆիզիկական ծավալների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ամսական կտրվածքով, ապա ակցիզային դրոշմանիշների օգտագործման վերաբերյալ հաշվարկները ներկայացվում են ըստ հայտերի ներկայացման պարբերականության և ժամանակագրական առումով այդ հաշվարկների և ակցիզային հարկի հաշվարկի և ֆիզիկական ծավալների վերաբերյալ տեղեկություններում ներկայացված տեղեկատվության մեջ հնարավոր են անհամապատասխանություններ,
- ակցիզային հարկի հաշվարկի 10-րդ տողը լրացված լինելու դեպքում անհրաժեշտ է համեմատություն կատարել ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների հետ, և, ակցիզային հարկի հաշվարկի 11-րդ տողում նշված գումարը չի կարող ավել լինել ՀՀ ԿԱ ՄՊԿ կողմից տրամադրված տեղեկություններում արտացոլված ակցիզային հարկի գումարից,
- ակցիզային հարկի հաշվարկի 12-րդ տողում նշված գումարը չի կարող ավել լինել ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 30-ի թիվ 529 որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացված հաշվարկային փաստաթղթերում արտացոլված ակցիզային հարկի գումարներից:

Հաստատագրված վճարների գծով կամերալ ուսումնասիրություն

Հաստատագրված վճարների գծով կամերալ ուսումնասիրության ժամանակ կարող է ուսումնասիրվել կամ ուշադրության արժանանալ հետևյալը, մասնավորապես՝

- առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից յուրաքանչյուր ամսվա համար ներկայացվող տեղեկություններում արտացոլված տվյալները կարող են համադրվել կազմակերպչի կողմից ներկայացված ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների, սահմանային չափերի վերաբերյալ հայտարարություններում արտացոլված տվյալների հետ,
- կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնողների կողմից ներկայացված հայտարարություններով՝ մինչև 17 (ներառյալ) նստատեղ ունեցող միկրոավտոբուսների քանակները պետք է համապատասխանեն լիա-

գոր մարմինների կողմից ներկայացված՝ տվյալ երթուղին սպասարկելու համար անհրաժեշտ (առանց պահուստային միկրովտոբուսների) միկրովտոբուսների քանակին,

- սահմանային չափերի վերաբերյալ ներկայացված հայտարարությունները համապատասխանեն սահմանված ձևերին: Ինչպես նաև անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ սահմանային չափը գերազանցելու դեպքում սահմանային չափը գերազանցած ժամանակաշրջանի համար հարկային պարտավորությունները հաշվարկվում են ընդհանուր սահմանված կարգով, մասնավորապես,
 - կրպակների միջոցով առևտրական գործունեության համար եռամսյակի ընթացքում (անկախ գործունեության իրականացման օրերի թվից) առևտրական տարածքի 1 քառակուսի մետրի հաշվով ապրանքաշրջանառության ծավալը 310 հազ. դրամը գերազանցելու,
 - հանրային սննդի գործունեության համար եռամսյակի ընթացքում (անկախ գործունեության իրականացման օրերի թվից) սպասարկման մակերեսի 1 քառակուսի մետրի հաշվով ապրանքաշրջանառության ծավալը 200 հազ. դրամը գերազանցելու
 - ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար ամսական իրացման շրջանառությունը մեկ աշխատատեղի հաշվով 800 հազ. դրամը գերազանցելու դեպքերում եռամսյակի (ամսվա) համար ԱԱՀ-ի և շահութահարկի (եկամտահարկի) գծով հարկային պարտավորությունները հաշվարկվում են ընդհանուր սահմանված կարգով:
 - առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության համար էթե 1 քառակուսի մետրի համար կազմակերպչի կողմից գանձվող վճարը գերազանցում է հաստատագրված վճարի 5-ապատիկը, ապա այդ դեպքում տվյալ ամսվա համար հաստատագրված վճարի չափը կրկնապատկվում է:
- ավտոտրանսպորտային միջոցների գազալիցքավորման գործունեություն իրականացնողների կողմից տվյալ ամսվա ընթացքում իրացված գազի ծավալների վերաբերյալ ներկայացված տվյալները պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով ներկայացված տեղեկություններում արտացոլված տվյալների հետ: Ինչպես նաև ուշադրություն դարձնել այդ գործունեությունից տվյալ ամսվա համար վճարման ենթակա հաստատագրված վճարի չափի ճիշտ որոշման, այսինքն վճարման ենթակա գումարը կազմում է ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալի 150000-ապատիկի չափով, թե իրացված գազի իրացված ծավալի նկատմամբ 20 դրամ (1 մետր խորանարդ գազի հաշվով) հաշվարկային դրույքաչափով կիրառելով:
- Բենզին և (կամ) դիզելային վառելիք ներմուծողների կողմից ներկայացված հաշվարկների կամերալ ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ՝
 - հաշվարկում արտացոլված բենզինի և դիզելային վառելիքի ներմուծված ծավալների քանակը (հաշվարկի [8] և [9] տողեր) համապատասխանի ՀՀ ԿԱ ՄՊԿ կողմից ներկայացված տեղեկություններում ներառված տվյալների հետ,
 - հաշվարկում արտացոլված բենզինի և դիզելային վառելիքի ներմուծված, իրացված ծավալների, իրացումից հասույթի վերաբերյալ տվյալները պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով ներկայացված տեղեկություններում արտացոլված տվյալների հետ,
 - տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաստատագրված վճարի չափի որոշման կարգին, մասնավորապես, հաշվարկված և պետական բյուջե վճարման ենթակա հաստատագրված վճարը հաշվարկվել է իրացումից հասույթի նկատմամբ դրույքաչափերի կիրառմամբ, թե իրացված քանակների նկատմամբ դրույքաչափերի կիրառմամբ:

Պարզեցված հարկի հաշվարկների, հայտարարագրերի կամերալ ուսումնասիրություն

Պարզեցված հարկի հաշվարկների կամերալ ուսումնասիրության ժամանակ կարող է ուսումնասիրվել կամ ուշադրության արժանանալ հետևյալը, մասնավորապես՝

- առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից պարզեցված հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու դեպքում պետք է հաշվի առնել, որ պարզեցված հարկ վճարվող կարող են համարվել անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի), չի գերեզանցել 50,0 մլն դրամը (նշված սահմանափակումը չի տարածվում նոտարական գործունեության վրա),
 - նոր ստեղծված առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պետական գրանցում ստանալու օրվանից համարվում են պարզեցված հարկ վճարողներ, էթե նրանք պետական գրանցման օրվանից մեկ ամսյա ժամկետում (բայց ոչ ուշ, քան պետական գրանցման եռամսյակի վերջին օրը) կներկայացնեն գրավոր հայտարարագիր այդպիսին համարվելու վերաբերյալ (բացառությամբ նոտարի պաշտոնում նշանակված անձանցից),
 - պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին, էթե հաշվետու ժամանակաշրջանի (եռամսյակի) ընթացքում իր կողմից ՀՀ «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների ներմուծման ծավալը (որոնց համար ԱԱՀ վճարված չի եղել ներմուծման պահին) գերազանցում է 250,0 հազ. դրամը (հիմք ընդունել ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունները),

- պարզեցված հարկ վճարող չեն կարող համարվել անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում ՀՀ «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների (որոնց համար ԱԱՀ վճարված չի եղել ներմուծման պահին) չիրացված մաքսային արժեքով հաշվարկված մնացորդը տվյալ տարվա հունվարի մեկի դրությամբ գերազանցում է մեկ մլն. դրամը: Այս հարցի ճշտման համար համեմատում ենք մաքսային մարմիններից ստացված տեղեկությունները ներմուծումից հետո հարկ վճարողի կողմից պարզեցված հարկի հաշվարկով ցույց տրված իրացման շրջանառության մեծության հետ: Եթե ներմուծման մաքսային արժեքը (խոսքը վերաբերվում է այն ապրանքների ներմուծմանը, որոնց համար մաքսային սահմանի վրա ԱԱՀ վճարված չէ) մեկ մլն. դրամով ավել է ներմուծումից հետո ցույց տրված իրացման շրջանառության ծավալից կամ, եթե հարկ վճարողը ներմուծել է տրանսպորտային միջոց և ներմուծման պահին չի վճարել ԱԱՀ, միաժամանակ 4-րդ եռամսյակի համար ներկայացվել է ալյուրահարկի հաշվարկ, որտեղ երևում է, որ հարկ վճարողը չի օտարել այդ տրանսպորտային միջոցը, ապա կարելի է ենթադրել, որ չիրացված ապրանքների մաքսային արժեքով մնացորդը գերազանցում է մեկ մլն. դրամով,
- պարզեցված հարկ վճարող չի կարող համարվել (տարվա ընթացքում դադարում է այդպիսին լինելուց) այն հարկ վճարողը, որը տվյալ տարվա հունվարի մեկի (դադարեցման դեպքում եռամսյակին հաջորդող ամսվա 1-ի) դրությամբ ունի 100,0 հազ. դրամ և ավելի ժամկետանց հարկային պարտավորություն,
- հարկի գործողությունը դադարում է տվյալ տարվա սկզբից 50.0 մլն դրամից ավելի իրացման շրջանառության ունենալու դեպքում (բացառությամբ նոտարների), նշված փաստը տեղի ունենալու պահից,
- հարկի գործողությունը դադարում է տվյալ տարվա որևէ պահին՝ խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրային գործունեության մատով, 15.0 մլն դրամը գերազանցող՝ իրեն պատկանող ապրանքային մնացորդի (հաշվարկված ձեռք բերման և վաճառքի գների առավելագույնով) առկայության դեպքում, նշված փաստը տեղի ունենալու պահից: Այս հարցի ճշտման համար համեմատում ենք մաքսային մարմիններից ստացված տեղեկությունների մաքսային արժեքները ներմուծումից հետո հարկ վճարողի կողմից պարզեցված հարկի հաշվարկով ցույց տրված իրացման շրջանառության հետ:
- հարկի գործողությունը դադարում է տվյալ տարվա որևէ պահին՝ եթե ներմուծման մեկ բեռնամաքսային հայտարարագրով հայտարարագրված ապրանքների մաքսային արժեքը 15.0 մլն դրամից ավել է, ապա կարելի է ենթադրել, որ տվյալ պահին ապրանքային մնացորդը գերազանցել է սահմանված չափը,
- հաշվարկով ցույց տրված իրացման հասույթը փոքր չլինի հաշվետու ժամանակաշրջանի ՀՂՄ-ից դուրս բերված ֆիսկալային հաշվետվության շրջանառությունից՝ խանութների, կրպակների /տաղավարների/ միջոցով առևտրական գործունեություն իրականացնողների դեպքում,
- «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» և «ե» կետերով սահմանված գործունեություններով զբաղվելու հիմք է ընդունվում՝ նշված գործունեություններից որևիցե մեկով զբաղվելու համար, լիցենզավորող մարմնի կողմից տրված լիցենզիայի առկայությունը,
- կազմակերպությունը հանդիսանում է պարզեցված հարկ վճարող և դուրս է գրել հաշիվ-ապրանքագիր՝ նշելով ԱԱՀ-ի մեծությունը:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվետվության կամերալ ուսումնասիրություն

- Գործատուների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվետվության կամերալ ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ՝
 - հաշվետու տարվա 12 ամիսների հաշվետվության ապահովագրության բյուջե վճարված սոցիալական վճարներ (37) տողերի հանրագումարը համապատասխանի տվյալ տարվա հաշվապահական հաշվեկշռի դրամական միջոցների հոսքերի մասին ձև 4 հաշվետվության հաշվետու ժամանակաշրջանի վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ (090) տողում արտացոլված գումարին,
 - հաշվետու տարվա 12 ամիսների հաշվետվության հաշվարկված սոցիալական վճարի գումարը (34) տողերի հանրագումարը համապատասխանի տվյալ տարվա շահութահարկի հաշվարկի համախառն եկամտից նվազեցվող ծախսերը՝ ըստ տարրերի աղյուսակ 5-ի «բ» ենթակետի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները տողում արտացոլված գումարին,
 - հաշվետու տարվա 12 ամիսների հաշվետվության հաշվարկված ԱՎՈՒՄ ընդամենը (16) տողերի հանրագումարը համապատասխանի տվյալ տարվա շահութահարկի հաշվարկի համախառն եկամտից նվազեցվող ծախսերը՝ ըստ տարրերի աղյուսակ 5-ի «բ» ենթակետի աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված այլ վճարներ տողում արտացոլված գումարին,
- Անհատ ձեռնարկատիրոջ, նուտարի տարեկան եկամուտների մասին հայտարարագրի կամերալ ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ՝
 - հաշվետու ժամանակաշրջանի հայտարարագրի գործունեությունից ստացված եկամուտները (21) տողի գումարը համապատասխանի տվյալ տարվա պարզեցված հարկի հաշվարկների կամ ԱԱՀ հաշվարկների (4 եռամսյակների) իրացման շրջանառության տողում արտացոլված գումարներին,
 - հաշվետու ժամանակաշրջանի հայտարարագրի գործունեությունից ստացված եկամուտները (21) և եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսերը (22) տողերի գումարները համընկնեն տվյալ տարվա ֆիզիկական անձի տարեկան եկամուտների հայտարարագրի՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ (40) և ընդամենը ծախսեր (57) տողերի գումարներին:

**Կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքներով հայտնաբերված
անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ կազմվող
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ տիպային օրինակ¹²**

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային
պետական ծառայության**

15 հոկտեմբերի 2006 թ.

Արաբկիրի հարկային տեսչություն
քաղ. Երևան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Կամերալ ուսումնասիրության արդյունքներով հայտնաբերված
անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ**

1. Հարկ վճարողների սպասարկման բաժնի գլխավոր հարկային տեսուչ՝ Սոնա Սահակյան

(կամերալ ուսումնասիրություն իրականացրած պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը)

2. Տվյալների սխալման և հաշվառման բաժնի ավագ հարկային տեսուչ՝ Արմեն Սարգսյան

(կամերալ ուսումնասիրություն իրականացրած պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը)

3. Կամերալ ուսումնասիրության ենթարկված հաշվետվությունը (ները) ներկայացրած
տնտեսավարող սուբյեկտ՝

"Պայծառ ապագա" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ՀՎՀՀ 00012345,
ք. Երևան, Հանրապետության 118

4. Կամերալ ուսումնասիրության ենթարկված հաշվետվության (ների) անվանումը (ները)՝

- 2006թ. երկրորդ եռամսյակի ավելացված արժեքի հարկի (ԶԶՀ) հաշվարկ,
- Տեղեկություններ 2006թ. երկրորդ եռամսյակում հարկ վճարող անձի կողմից դուրս գրված (գևորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ,
- 2006թ. երկրորդ եռամսյակում կազմակերպության կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, պահված եկամտահարկի հաշվարկ.

5. Կամերալ ուսումնասիրության արդյունքներով հայտնաբերված
անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների նկարագրությունը՝

ա) "Պայծառ ապագա" ՍՊԸ կողմից ՀՀ ԿԶ ՀՊԾ Արաբկիրի հարկային տեսչություն
ներկայացված՝ 2006թ. երկրորդ եռամսյակի ԶԶՀ-ի հաշվարկի 15-ը տողում (ՀՀ տարածք ներմուծված
ապրանքներ) որպես ՀՀ տարածք ներմուծված ապրանքների մաքսային արժեք է նշված 2.567.000 դրամ:
Միաժամանակ, ՀՀ ԿԶ մաքսային պետական կոմիտեի կողմից ՀՀ ԿԶ ՀՊԾ-ի տրամադրված
տեղեկությունների համաձայն "Պայծառ ապագա" ՍՊԸ կողմից 2006թ. երկրորդ եռամսյակի ընթացքում
իրականացվել է ՀՀ տարածք ապրանքների ներմուծման թվով 3 (երեք) գործարք՝ 3.867.000 դրամ ընդհանուր
մաքսային արժեքով: Երկու դեպքում հարկային մարմինը հավաստի է համարում ՀՀ ԿԶ մաքսային պետական

¹² Արձանագրության տիպային օրինակում բերված անճանական, անվանական, թվային և մյուս տվյալները պայմանական են:

կոմիտեի տրամադրած տեղեկությունները, քանզի դրանք, ինչպես ջոյց է տալիս բազմամյա փորձը, որպես կանոն հավաստի են:

բ) "Պայծառ ապագա" ՍՊԸ կողմից ՀՀ ԿԵ ՀՊԾ Արաբկիրի հարկային տեսչություն ներկայացված՝ 2006թ. երկրորդ եռամսյակում հարկ վճարող անձի կողմից դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկության մեջ նշված է, որ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իր կողմից մատակարարված ապրանքների գծով դուրս է գրվել ՀՀ կառավարության կողմից սահմանված սահմանաչափը (100 հազար դրամ՝ առանց ԱԿՀ-ի) գերազանցող թվով 8 (ութ) հարկային հաշիվ՝ 4.820.000 դրամ ընդհանուր գումարով: Մինչդեռ, նույն՝ 2006թ. երկրորդ եռամսյակի ԱԿՀ-ի հաշվարկի 11Ա (ԱԿՀ-ի 20% դրույքաչափով հարկվող գործարքներ) տողում որպես հարկվող շրջանառություն է նշված 4.510.000 դրամ: Տվյալ դեպքում հարկային մարմինը հակված է ընդունել, որ տեղեկություններում (այլ ոչ ԱԿՀ-ի հաշվարկի 11Ա տողում) ներառված տվյալները ճիշտ են, քանի որ դրանք համեմատվել են ՀՀ ԿԵ ՀՊԾ տվյալների բազայում առկա տեղեկությունների հետ, և այդ նույն հաշիվների վերաբերյալ նույն տեղեկությունը ներկայացվել է "Պայծառ ապագա" ՍՊԸ-ից հարկային հաշիվներ ստացած տնտեսավարող սուբյեկտների կողմից:


6. Առաջարկվում է տնտեսավարող սուբյեկտին՝

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետի դրույթները՝ "Պայծառ ապագա" ՍՊԸ-ին առաջարկվում է հիևագ աշխատանքային օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով Արաբկիրի հարկային տեսչություն ներկայացնել 2006թ. երկրորդ եռամսյակի ԱԿՀ-ի ճշգրտված հաշվարկ:

ա) համապատասխանեցնելով նշված եռամսյակի համար 14.07.2006թ. ներկայացված ԱԿՀ-ի հաշվարկի 15Ա տողում նշված՝ ՀՀ տարածք ներմուծված ապրանքների մաքսային արժեքը (2 567.000 դրամ) ՀՀ ԿԵ մաքսային պետական կոմիտեից ստացված մաքսային արժեքի (3.867.000 դրամ) հետ,

բ) ճշգրտելով նշված եռամսյակի համար 14.07.2006թ. ՀՀ ԿԵ ՀՊԾ Արաբկիրի հարկային տեսչություն ներկայացված ԱԿՀ-ի հաշվարկի 11Ա տողում նշված (4.510.000 դրամ) շրջանառությունը, քանի որ այդ շրջանառությունը չի կարող փոքր լինել (առնվազն պետք է հավասար լինի) նույն ժամանակաշրջանի համար ներկայացված՝ որպես մատակարար դուրս գրած այն հարկային հաշիվների ընդհանուր շրջանառությունից (4.820.000 դրամ), որոնց վերաբերյալ ՉԵր կողմից 24.07.2006թ. ներկայացվել են տեղեկություններ:

Ուսումնասիրությունն իրականացրած հարկ վճարողների սպասարկման՝

բաժնի պետ	Այլա Հակոբյան	Ա. Հակոբյան
պաշտոնատար անձինք՝	Հարկ վճարողների սպասարկման բաժնի գլխավոր հարկային տեսուչ՝ Սոնա Սահակյան	Ս. Սահակյան
	Հարկ վճարողների սպասարկման բաժնի ավագ հարկային տեսուչ՝ Արմեն Սարգսյան	Ա. Սարգսյան

Արձանագրության նշված պայմանական օրինակից մենք տեսնում ենք, որ կազմակերպության կողմից հարկային տեսչություն ներկայացված հաշվետվությունների կամերալ ուսումնասիրության են ենթարկվել երեքը, և երկուսում հայտնաբերվել են անհամապատասխանություններ: Ընդ որում, այստեղ ուշադրության է արժանի հետևյալ փաստը. եթե առաջին դեպքում անհամապատասխանությունն ի հայտ է եկել կազմակերպության և պետական մարմնի (տվյալ դեպքում ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի) կողմից ներկայացված հաշվարկների (տեղեկությունների) համադրման արդյունքներով, ապա երկրորդ դեպքում, անճշտություն է հայտնաբերվել կազմակերպության կողմից հարկային տեսչություն ներկայացված երկու տարբեր հաշվարկների (տեղեկությունների) միջև: Այստեղ անվիճելի է մեկ բան, առնվազն արձանագրության երկրորդ մասով սխալն ակնհայտ է (կամ ԱԱՀ-ի հաշվարկի, կամ դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների մասով):

Ուշադրություն

Գրավոր առարկությունները (այդ թվում՝ առարկության հիմք հանդիսացած խախտումները) կարող են օգտագործել միայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ստուգումների ժամանակ: Նշված խախտումների հետևանքով պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության կրկնակի ստուգումներ կարող են անցկացվել միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Կազմակերպությունը հարկային տեսչությունից ստանալով նշված արձանագրությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում պետք է քննարկի նշված երկու անհամապատասխանությունների հարցը և արձագանքի դրանց: Կամ օրենքի համաձայն կազմակերպությունը պետք է ներկայացնի 2006թ. երկրորդ եռամսյակի ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ (ընդունելով խախտումները՝ ամբողջությամբ կամ մասնակի), կամ ներկայացնի իր գրավոր առարկությունները՝ խախտումներն ամբողջությամբ կամ մասնակիորեն չընդունելու մասին: Ավելորդ չէ նշել, որ կազմակերպությունը կարող է և ընդհանրապես չարձագանքել:

Ամեն դեպքում, մենք խորհուրդ ենք տալիս հարկ վճարողներին նման դեպքերում անպայման քննարկել ստացված արձանագրություններով ներկայացվող՝ հարկային մարմնի կողմից հայտնաբերված խախտումները, և անհրաժեշտության դեպքում ներկայացնել ճշգրտված հաշվարկներ, հաշվետվություններ:

10.

ՓՈՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՇԱՐԿԱՅԻՆ ՇԱԶՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՇԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հարկային և պարտադիր այլ վճարների օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները (այսուհետ՝ սույն ձեռնարկում կօգտագործվի հաշվետվություններ հասկացությունը) սահմանված ժամկետներում հարկային մարմիններ հարկ վճարողի կողմից կարող են ներկայացվել.

ա) առձեռն.

Հարկ վճարողի կողմից առձեռն ներկայացվող հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները հարկային մարմնում հատուկ գրանցամատյանում գրանցվում են, հաշվառվում են ըստ ներկայացման օրերի և հերթական համարների: Դրանց ստացումը ամրագրվում (հաստատվում) է դրոշմակնիքով:

բ) փոստով¹³:

Հարկ վճարողը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանից հետո սահմանված ժամկետներում կարող է հաշվետվությունները ներկայացնել փոստի միջոցով իր հաշվառման հարկային տեսչության հասցեով¹⁴: Ընդ որում այդ հաշվետվությունները պետք է ուղարկվեն բացառապես պատվիրված նամակով՝ ինքնուրույն կատարելով նամակի առաքման հետ կապված բոլոր ծախսերը:

Ուշադրություն

Փոստի միջոցով հաշվետվությունները հարկային տեսչություն ներկայացնելու նպատակով հարկ վճարողը պարտավոր է ապահովել հետևյալը.

- նախքան հարկային տեսչություն փոստի միջոցով հաշվետվությունների ներկայացնելը՝ հաշվետվություններում նաև պարտադիր լրացման ենթակա են՝
 - ա) հարկ վճարողի լրիվ անվանումը,
 - բ) հարկ վճարողի հաշվառման համարը,
 - գ) հաշվետու ժամանակաշրջանը, որի համար ներկայացվում են հաշվետվությունները,
 - դ) օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկ վճարողի և (կամ) գլխավոր հաշվապահի ստորագրությունը և (կամ) կնիքը:
- նամակում հաշվետվություններին ամրակցվում է պարունակության նկարագրությամբ թերթիկ¹⁵, որում պարտադիր նշվում է նամակում պարունակվող հաշվետվությունների ցանկը՝ համապատասխան անվանումներով, և ներկայացվող հաշվետվությունների ընդհանուր էջերի քանակը: Հարկ վճարողը պարտադիր կերպով ստորագրում և կնքում է թերթիկը:
- նամակի ծրարի վրա պարտադիր պետք է նշված լինի հարկ վճարողի գտնվելու վայրի (պետական գրանցման վայրի) հետադարձ հասցեն:

Անհրաժեշտ է նկատի ունենալ

- հաշվետվությունները փոստի միջոցով հարկային տեսչություն ներկայացնելու օր է համարվում փոստային բաժանմունքի կողմից ծրարի ընդունման օրվա դրությամբ դրված օրացույցային կնիքի արտատիպը,

¹³ Սահմանված է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի «Հարկային և պարտադիր այլ վճարների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները փոստի միջոցով հարկային մարմին ներկայացնելու պարզեցված ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 471-Ն որոշմամբ

¹⁴ Տես՝ սույն ձեռնարկի առաջին բաժինը:

¹⁵ Տես՝ տվյալ բաժնում ներկայացված օրինակելի ձևը:

- հարկային տեսչության կողմից հարկ վճարողին հաշվետվությունների հետ վերադարձման օր է համարվում փոստային բաժանմունքի կողմից այդ հաշվետվությունների ընդունման օրը,
- ծրարի վրա փոստային բաժանմունքի կողմից նամակի ընդունման օրը հավաստող օրացույցային կնիքի արտատիպի բացակայության կամ վնասվածության կամ դրա բացահայտ անընթեռնելիության դեպքում այդ նամակները չեն ընդունվում հարկային տեսչության կողմից: Ընդ որում, եթե հաշվետվությունը հարկ վճարողը ներկայացրել է մինչև հաշվետվությունների ներկայացման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալը, ապա անկախ վերը նշված հանգամանքների առկայությունից հաշվետվությունը համարվում է ներկայացված,
- այն ծրարները, որոնց վրա բացակայում է հետադարձ հասցեն, հարկային տեսչության կողմից չեն ընդունվում:
- նամակում պարունակության նկարագրությամբ թերթիկի բացակայության դեպքում փոստի միջոցով ներկայացված բոլոր հաշվետվությունները հարկային տեսչության կողմից չեն ընդունվում և այդ հաշվետվություններն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային տեսչությունը նամակով կամ առձեռն՝ համապատասխան հիմնավորմամբ հետ է վերադարձնում հարկ վճարողին: Ընդ որում, հաշվետվությունները հարկ վճարողին հետ վերադարձված չեն համարվում, եթե հարկային տեսչության նամակում բացակայում է հարկային տեսչության անվանումը, կնիքը եւ ամսաթիվը:
- հարկային տեսչություն փոստի միջոցով ներկայացված հաշվետվություններում հարկ վճարողի լրիվ անվանման կամ հարկ վճարողի հաշվառման համարի, կամ հաշվետու ժամանակաշրջանի, որի համար ներկայացվում են հաշվետվությունները, կամ հարկ վճարողի և (կամ) գլխավոր հաշվապահի ստորագրության և (կամ) կնիքի բացակայության, ինչպես նաև հաշվետվությունն օրենսդրությամբ սահմանված ձեւաթղթերի վրա լրացված չլինելու, կամ թերթիկում նշված որեւէ հաշվետվություն կամ այդ հաշվետվության անբաժանելի մասը կազմող փաստաթղթի բացակայության դեպքում հաշվետվությունը համարվում է չներկայացված, և հարկային տեսչությունը այդ հաշվետվություններն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան գրությամբ դրա մասին տեղեկացնում է հարկ վճարողին:

Օգտակար է իմանալ

Հարկային մարմին փոստի միջոցով ներկայացված հաշվետվությունները կարվում են հարկ վճարողի հարկային գործում, իսկ չներկայացվածների մասին հարկային գործում կատարվում է համապատասխան նշում:

ՀՀ ԿԱ ՀՊԾ
(տարածքային) հարկային տեսչության պետ
.....
(անունը, ազգանունը)

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԹԵՐԹԻԿ

Փոստի միջոցով ներկայացվող հաշվետվությունների, հաշվարկների, այլ փաստաթղթերի եւ տեղեկությունների (այսուհետ՝ հաշվետվություն) վերաբերյալ

Սույն թերթիկին կից ներկայացվում են.

.....
(հարկ վճարողի լրիվ անվանումը, կազմակերպատիրական տեսակը,

.....
հասցեն, ՀՎՀՀ)

- 1. _____ բաղկացած _____ էջից,
(հաշվետվության անվանումը)
- 2. _____ բաղկացած _____ էջից,
(հաշվետվության անվանումը)
- 3. _____ բաղկացած _____ էջից,
(հաշվետվության անվանումը)
- 4. _____ բաղկացած _____ էջից,
(հաշվետվության անվանումը)
- 5. _____ բաղկացած _____ էջից,
(հաշվետվության անվանումը)

Ընդամենը ներկայացվում է _____ էջ:

Հարկ վճարողի ղեկավար _____
(անհատ ձեռնարկատեր) (ստորագրությունը) _____ (անունը, հայրանունը, ազգանունը)

_____ 200 թ.

Կ.Տ.

**ՀԱՐԿ ԿՃԱՐՈՂՆԵՐԻ
ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՆԵՐԴՐՄԱՆ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ
ՁԵՌՆԱՐԿ**

Էջադրումը և ձևավորումը
Ա. Հարությունյանի

Մինչտպագրական աշխատանքներ՝ «ԴԱՐ» ՍՊԸ
Տպագրությունը՝ «ԷՂԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
Տպաքանակ՝ 500